

# ԳԼՈԲԱԼ ՄԳՆԱԺԱՄ

Դրատարակիչ՝ Դայաստանի Դամրապետական  
կուսակցություն

ԵՐԵՎԱՆ - 2010

Ժողովածուն ներկայացնում է մի շարք հեղինակավոր քաղաքական գործիչների եւ վերլուծաբանների (Հենրի Քիսինջեր, Զրիգնեւ Բժեզինսկի, Սերգեյ Կարագանով եւն) հոդվածները, հարցազրույցները, որոնք հայերեն թարգմանվել եւ հրատարակվել են «Հանրապետական» ամսագրում:

Հեղինակները վերլուծում ու գնահատում են արդի աշխարհում ստեղծված ճգնաժամային իրավիճակը, դրա պատճառներն ու հետեւանքները, փորձում կանխատեսել ապագա զարգացումները:

# ԳԼՈԲԱԼ ճԳՆԱԺԱՄԻ ԷՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

## Ֆեղոր Շելով-Կովերյան

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԾԱՎԱԼԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ ՍԱՐՄԱՆԸ

Կապիտալիզմի էվոլյուցիան (սկսած 1850-ական թթ.) միշտ ուղեկցվել է ճգնաժամերի հերթագայությամբ, որոնցից սկզբում Մեծ Բրիտանիան, հետո՝ Միացյալ Նահանգներն ամեն անգամ դուրս էին գալիս՝ ակտիվորեն օգտագործելով արտաքին աղբյուրները: Իրենց դիրքի եւ հուսալի համբավի շնորհիվ նրանք կառողանում էին մորթիլիզացնել իրադարձությունների այլ մասնակիցների ռեսուրսները եւ առավելագույն օգուտ քաղել դրանցից:

Ոեցեսիան հաղթահարելու կամ թույլ չտալու օպտիմալ մոդելների որոնումը մերը ընդ մերը ընդհատվում էր պատերազմներով, որոնց օգնությամբ փորձ էր արվում մեկընդ-միշտ վերջ տալ ճգնաժամային երեւույթներին: Միջապատերազմյան ժամանակաշրջաններում ճգնաժամը կառավարելու փորձերը մեղմուն էին առավել ակնհայտ մակերեսային հակասությունները՝ չշոշափելով դրանց հիմնային պատճառները:

Դարցերն ըստ եռթյան լուծելուց խուսափելով՝ կապիտալիզմը յուրաքանչյուր տեկսոնական շարժի ընթացքում եւ դրանից հետո ընդլայնում էր իր սպառողական շուկան: Շուկայի՝ ամեն ինչ հօգուտ իրեն գործադրելու ինքնըստինքյան, բնատուր կարողությունն էլ հենց ստեղծում էր մի ինչ-որ հետեւողականորեն իրականացվող «գաղտնի» պլանի գոյության «հնարավորության» խարուսիկ տպավորություն:

Ներկա գլոբալ ճգնաժամի շատ հայտանիշներ վկայում են այն մասին, որ կապիտալիզմի մեխանիկական տարածումը հասել է իր բնական սահմանագծին, իսկ դա պահանջում է, ի վերջո, սկզբունքայնորեն մոդեռնացնել այն: Ցավոք, ծավալվող իրադարձությունների հենց համարժեք դասակարգումը չի բավականացնում: Տնտեսագետները ճակատագրականորեն ուշանում են մեզ վրա թափված հիմնախնդիրների ճանաչման հարցում. երբ արդեն պարզ դարձավ, որ ճգնաժամը տնտեսական է, համառորեն

շարունակում էին այն ֆինանսական անվանել: Երբ Գերմանիայում, Հունաստանում, Իսլանդիայում, Իսպանիայում, Իտալիայում եւ Ֆրանսիայում դրան անվերապահ սոցիալական չափում էին վերագրում, այն դժվարությամբ տնտեսական ճանաչեցին: Եվ միայն 2009թ. գարնան կեսին ոմանք սկսեցին խոսել սոցիալ-հումանիտար սպառնալիքի մասին: Բայց այս սահմանումը եւս արդեն հնացել է: Սակայն շատերն այսպես թե այնպես ընդունում են, որ խոսքն ընդհանուր առնամբ խորքային մշակութային (քաղաքակրթական) ճգնաժամի մասին է:

Ընդհանուր կարծիքի համաձայն, ներկա ճգնաժամն աչքի է ընկնում համակարգային բնույթով, բայց լիարժեք, այսինքն՝ ինքնարբավ համակարգ է միայն մշակույթը, իսկ տնտեսությունը, զուտ գիտական կառուցվածքների շրջանակներից դուրս, ընդամենը դրա ենթահանակարգն է: Իհարկե, նեղ հետազոտության շրջանակում ցանկացած անբողջություն կարող է համակարգ կոչվել, բայց ննան մոտեցումը զուտ ակադեմիական արժեք ունի:

Ավելին, երբ պրակտիկները խոսում են տիրող տնտեսական աշխարհայացքի ճգնաժամի, ֆորմացիոն եւ տեկտոնական տեղաշարժի մասին, նրանք օգտագործում են իմաստային այն շարքը, որն ընդունված է ոչ թե տնտեսագիտությունում, այլ մշակույթում, որին էլ նրանցից ոնանք ուղղակիորեն հղում են կատարում: Մշակույթն են վկայակոչում նաև ի հայտ եկած բարոյական ռիսկերի, վստահության ճգնաժամի, շուկայում էթիկայի նորմերը խստացնելու անհրաժեշտության դատողությունների ընթացքում: Չէ՞ որ ակնհայտ է, որ վստահությունը, որի վրա են կառուցվում փոխհարաբերություններն արդեն ամենապարզագույն հասարակություններում, «տարիքով» մեծ է տնտեսությունից, իսկ էթիկան ոչ նրա ածանցյալն է, ոչ էլ նպատակը: Այս բոլոր հասկացությունները փոխառված են մշակույթի աշխարհից (համակարգից):

Քանի որ խոսքը մշակութային ճգնաժամի մասին է, ապա հարկավոր է հասկանալ, թե ինչ տեսակի մշակույթն է այն կրում իր վրա: Անցյալում մեկ անգամ չէ, որ մշակութային ճգնաժամեր են եղել, որոնք անպայման պատկանել են մի ինչ-որ որոշակի մշակութային տեսակի: Ներկա ճգնաժամը բացառություն չէ:

Ակնհայտ են արդի մշակույթի՝ միմյանց հետ կապված ճգնաժամային երկու մեծ երեւույթներ:

Դրանցից մեկը ներառում է պոստմոդեռնիզմի՝ որպես մշակութային տեսակի, տարբեր կողմերը:

**Նախ**՝ բավական վաղուց պոստմոդեռնը մշակութային օբյեկտների շրջանառությունից դուրս է հանել հիմնական ռեֆերենտին (հսկական արվեստի փոխարինում զանգվածային մշակույթով), ինչից էլ, մասնավորապես, սկսվեց Արեւմուտքի քաղաքակրթական ջլատումը: Այնուհետեւ պոստմոդեռնը նույնն արեց քաղաքականության հետ. XX եւ XXI դ. սկսեցին տարածվել ոչ միայն բռնատիրական վարչակարգերը, այլ նաև պատմության ավարտի նորաձեւ արեւմտյան հայեցակարգերը, անտեսվում էր հանրային կարծիքը հետխորհրդային երկրներում՝ Ռուսաստանից եւ Եվրամիության երիտասարդ երկրներից մինչեւ Վրաստան եւ Ուկրաինա: Ընդ որում, հարկավոր է պատշաճը նատուրալ տնտեսական սուբյեկտներին. դրանք բոլորից երկար դիմակայեցին պոստմոդեռնի վարակին: Բայց ի վերջո տնտեսությունը վարակվեց դրանով, եւ այն վերաճեց տնտեսությունը քայլայող ձգանի: Ակնհայտ դարձավ, որ պոստմոդեռնիզմը՝ որպես աշխարհայացք եւ ռազմավարություն, խիստ վտանգավոր է:

**Երկրորդ՝** չկայացած դուրս եկավ «միջոցների», այլ ոչ թե նպատակների» իդեոլոգենը, ինչով վերջերս այնպես հպարտանում էին արեւմտաեվրոպացի ինտելեկտուալները: Ավելի վաղ էլ կարելի էր գլխի ընկնել, որ այդ փիլիսոփայությունը կործանարար է, քանի որ հաստատում է կյանքին գերեզմանոցային մոտեցումը. չէ՞ որ միայն նրանք այլեւս ոչ մի նպատակ չունեն, ովքեր հանգչում են գերեզմանատանը, եւ նպատակներն են, որ բնության մեջ նյութի շրջանառության միջոց են ծառայում: Եվ միայն հիմա է, որ աստիճանաբար վերադառնում է ընկալումն այն քանի, որ առանց անանց արժեքներով դեկավարվելու, առանց գաղափարական եւ նյութական գործիքները դրանց ենթարկեցնելու՝ մարդկությունը չի ապրի:

**Երրրորդ՝** անարդյունավետ դուրս եկավ արագության քաղաքակրթությունը: Ֆոնդային շուկաների փլուզումից հետո սկսեցին անաշել այն որպես տեղեկատվական եւ հետտեղեկատվական տնտեսության գլխավոր նվաճումներից մեկն առաջ

քաշելուց: Եվ այնուամենայնիվ, ակնհայտորեն անբավարար ուշադրություն է դարձվում արագությանը չափից ավելի տարվելու բացասական հետեւանքներին:

Իրարանցումն առավել վտանգավոր է սոցիալական առումով, քանի որ սպանում է մարդկանց միջեւ նորմալ շփումը, զրկում նրանց հոգեկան կոմֆորտից, որն անհրաժեշտ է հաջող զարգացմանն ու արժեքներին ուղղված նպատակադրմանը: Արագացումից ելնելով է նաեւ, որ հանուն արտադրանքի նոր մոդելների սպառնան, առաջարկի խթանման, ազատական տնտեսությունը հանգեց այն նույն արդյունքին, ինչ եւ դիրեկտիվ տնտեսությունը, ասել է թե՝ ապրանքների որակի անկման:

Տարօրինակ է, բայց փաստ. քանի որ առաջարկվող ապրանքներն ավելի ու ավելի արագ են բարոյապես հնանում, անիմաստ է դառնում արտադրել այնպիսի իրեր, որոնց հուսալիությունը հաշվարկված է երկարատեւ ժամկետի համար: Որակի անկումն աստիճանաբար տարածվեց նաեւ գաղափարների եւ որոշումների արտադրության վրա: Ավելի մեծ թվով գաղափարներ ու որոշումներ են առաջ քաշվում՝ առանց գոնե միջնաժամկետ հետեւանքները հաշվի առնելու:

Նորարարությունների տեմպերի խթանման ճանապարհին մեզ եւս մեկ ստործոյա խութ է դարանակալում: Արդեն այժմ զանգվածային սպառողի տրամադրության տակ տեխնիկական նորույթների հայտնվելու ժամկետը, որը տարիներ ու տասնամյակներ էր զբաղեցնում, կրծատվեց մինչեւ մի քանի ամսի: Մոտ ապագայում այն կարող է հասցել շաբաթների: Իսկ երբ բանն արդեն հասնի օրերին (դրան է մղում շահութը մշտապես օպտիմալացնելու ձգումը), ինովացիոն գործունեությունը, որպես այդպիսին, կիմաստագրիկվի. նորույթները բարոյապես ավելի արագ կինանան, քան կիասցնեն լրիվ օգտագործվել:

#### ԳԼՈԲԱԼ ԾԳԱԾԱՄԸ ՃՅՈՒՂԱՅԻՆ ԾԳԱԾԱՄԵՐԻ ՖՈՆԻՆ

Ցավոք, գլոբալ ճգնաժամից դուրս գալը դեռ բավական հեռու է: Միեւնույն ժամանակ, ճգնաժամի հետ կապված իրադարձությունները ծավալվում են դրա ընթացքը ծանրացնող ճյուղային ճգնաժամերի մի ամբողջ շարքի ֆոնին: Դրանց մեծ

մասը չունի զուտ տնտեսական ծագում, ինչը մեկ անգամ եւս հավաստում է, որ այն, ինչ տեղի է ունենում, համամշակութային բնույթ ունի:

Եյուղային ճգնաժամերից առաջինը տնտեսագիտության ճգնաժամն է: Այնպիսի տարրեր տեսաբաններ եւ պրակտիկներ, ինչպիսիք են Ռոբերտ Զելիկը, Զոգեֆ Սթիվլը, Նուրիել Ռուբինին, Սարթին Գիլմանը եւ Ուորեն Բաֆեթը, չեն համարձակվում գոնե մոտավորապես ասել, թե երբ կավարտվեն ընթացիկ ցնցումները: Բեն Բերնանկեն շարունակում է պահանջել ամերիկյան բանկերին աջակցություն՝ «ինչ գնով էլ լինի»: Բարաք Օբաման հայտարարում է ռեցեսիայից դուրս գալու սկզբի մասին, իսկ Ալան Գրիսփենը նախազգուշացնում է, որ հիփոթեքային շուկայի անկումը եւս 5%-ով (շատ հավանական է) մինչեւ վերջ կխորտակի ամերիկյան տնտեսությունը:

Նման տարածայնությունը բացատրվում է նրանով, որ գիտնականներին չի հաջողվում որոշակի բան ասել ճգնաժամի բնույթի մասին: Առկա բոլոր պատասխաններն առայժմ հանգեցվում են դրա ժխտական սահմանումներին. դա շրջափուլային ճգնաժամ չէ, Վերարտադրության սովորական ճգնաժամ չէ, որի դեպքում տոկոսադրույքի բարձրացումը հանգեցնում է դրամական առաջարկի սեղմնան, պահանջարկի կրծատման, գների իջեցման եւ ի հետեւամբ՝ տոկոսադրույքի նոր իջեցման: Լավատեսություն չեն ավելացնում նաեւ այն պնդումները, թե գիտնականների մեջ համաձայնություն չկա նույնիսկ իհն ճգնաժամերի ծագման հարցերում: Այս առնչությամբ երկյուղներ են առաջ գալիս, թե արդյոք բավականաչափ հիմնավոր են համապատասխան հայեցակարգերը: Երկարաժամկետ տնտեսական ցիկլերի տեսությունն, ըստ երեւույթին, հնացել է: Իրական ցիկլերի տեսությունը գործնական արժեք չունի, գործնական ցիկլերի արդի մոդելները չեն երաշխավորում դրանցում ներկայացված հաշվարկների եւ արդյունքների իրատեսությունը, ինչը դրամք վերածում է զուտ մտքի խաղի:

Եյուղային ճգնաժամներից երկրորդը հոգեբանական ճգնաժամն է: Ֆինանսական հատվածի եկամտաբերությամբ առաջ եկած խանդավառությունը փոխարինվեց խոր հողետեսությամբ: Այն բանից հետո, երբ հօդս ցնդեց հերթական

պատրանքը, շատերը չգիտես ինչու սկսեցին թաղել կապիտալիզմը որպես այդպիսին, նզովել անկուշտ բանկիրներին եւ այլն:

Իրադարձությունների վրա խիստ ուժեղ ազդեցություն գործող երրորդ գործոնը ազատական տնտեսության ճգնաժամն է: Արեւի տակ տեղ ունենալու համար մրցակցելու անհրաժեշտությունից զրկված՝ այն արագ կորցրեց ինքնավերահսկողությունը: Հարցականի տակ հայտնվեց լիբերալիզմի բազային՝ սեփական ակտիվության պտուղների համար անձնական պատասխանատվության գաղափարը:

Ավաղ, համաշխարհային առաջատարների՝ այժմ այնքան պահանջված գաղափարների ոլորտում է դարանակալել ճյուղային չորրորդ՝ փիլիսոփայության ճգնաժամը: Լավագույն դեպքում կապիտալիզմի ամբողջ ռեֆորմը հանգեցվում է դրա անգուսաքսոնյան մոդելի ծիսական չընդուննանք, վատագույն դեպքում՝ համաշխարհային առաջատարներն իրենք են գուրգուրում սոցիալիզմը՝ մոլորակը մղելով նոր աղետի:

Դինգերորդ՝ գործողությունների ճգնաժամն ուղղակիորեն բխում է նախորդներից: Քանի որ ոչ չունի գլորալ համադեսը հասկանալու պարադիգմը, ապա միջոցներն էլ այնպիսին են, որ կկարողանային օգնել նախորդ, այլ ոչ թե ներկա ցնցումների պարագայում: Այնպիսի քայլեր, ինչպիսիք են շուկայական հարաբերությունների կանոնների պահպանման հանդեպ պետական վերահսկողության ուժեղացումը, համաշխարհային եւ/կամ տարածաշրջանային պահուստային արժութային ու ֆինանսական կենտրոնների թվի ավելացումը, քվոտաների եւ ծայների վերաբաշխումը Արժույթի միջազգայի հիմնադրամում (ԱՄՔ) եւ այն, ինքնըստինքյան հնարավոր են եւ անհրաժեշտ: Սակայն այս բոլոր քայլերը ուղղակի կապ չունեն ընթացիկ ճգնաժամային հանգամանքների հետ: Ուստի կասկածելի է, թե արդյոք բավարար են ավելի վաղ իրենց արդյունավետությունն ապացուցած կարգավորման մեխանիզմներն ու նորերի մշակումը՝ նախկին տրամաբանությամբ: Այսինքն՝ ամեն ինչ կարծես թե ծիշտ է արվում, բայց մեկ այլ հիվանդության բուժման համար:

Այնինչ, մարդկությունը բախվում է ամենեւին էլ ոչ սովորական մարտահրավերների: Դրանցից առաջինն այն է, թե

արդյոք կապիտալիզմն ինտենսիվ զարգացման ընդունակություն կցուցաբերի: Տարօրինակ է հնչում, քանի որ բոլորը սպիր էին այս երկու երեւոյթների գրեթե նույնացմանը: Իրականում նման կապը կապիտալիստական պարադիգմի շրջանակներում արդարացի է միայն տեխնիկական առաջընթացի առումով: Իսկ որպես կապիտալիզմ հայտնի տնտեսական կացութաձեւն ինքը այդ նույն ժամանակ բացառապես էքստենսիվ էր զարգանում: Այն նոր շուկաներ էր յուրացնում այն նույն մեթոդներով, որոնք փորձարկվել էին հների վրա, եւ ներկա պահին հասել է իր մեխանիկական տարածման աշխարհագրական սահմաններին: Մնում են, իհարկե, Ասիայի եւ Աֆրիկայի աղքատագույն երկրները եւ Հնդկաստանի ու Չինաստանի բազմամիլիարդ հասարակությունների հնարավորությունները: Բայց մի կողմից՝ դրանց յուրացումը պահանջում է հսկայական ներդրումներ, որոնք, բացի Արևմուտքի համար ոչ անվտանգ Չինաստանից եւ արարաներից, ոչ ոքի չեն ոգեւորում: Մյուս կողմից՝ դա կլինի այն նույն էքստենսիվ ճանապարհի շարունակությունը:

ճիշտ նույն տրամաբանությանը հետեւեցին նաեւ այսպես կոչված «նոր ֆինանսական տեխնոլոգիաները»: Պարբերաբար առաջ եկող ֆյուչերսների եւ դերիվատիվների (մինչ այդ արժեթղթերի գոյություն չունեցող տեսակներ) նման նորույթները գործիքներ են, որոնց շրջանառության եղանակը («տեխնոլոգիան»), սակայն, մնում էր հինգ, ինչպես դա նկարագրված է Թեոդոր Դրայգերի հանրահայտ «Ֆինանսիստը» վեպում:

Եթե կապիտալիզմի որակական ամի հույսերն անհիմն են, ապա դրա նախադրյալը պետք է դառնա ընդհանուր ընկալումն այն բանի, որ աշխարհին այլեւս չի կարելի նայել որպես սեփական գործունեության ճշգիմ հումք կամ որպես բատերական բեն, որտեղ ներկայացվում է վիրտուալ գործող անձանց շահերի խաղը: Այն իսկապես դարձել է մեր ընդհանուր եւ շատ հավաք տունը, եւ մենք մեզ այնտեղ պետք է հավուր պատշաճի պահենք:

Այստեղից բխում է երկողող մարտահրավերը. կկարողանա՞ արդյոք տնտեսագիտությունը դուրս գալ սաղմնային, նկարագրական վիճակից, որտեղ անգամ անցած իրադարձությունների համաձայնություն չկա, եւ հանգել (ինչպես դա պատահել է կենսաբանության վերաճած բուսաբանության եւ

կենդանաբանության հետ) աշխատող տեսություններից: Ոուսաստանցի տնտեսագետ Ռեւլդ Էնտովը նշում է. «Տնտեսական շրջափուլի տեսությունը զարգանում է արդեն գրեթե երկու հարյուրամյակ: Բայց երբեք եւ ոչ ոքի չի հաջողվել կանխատեսել ճգնաժամերից եւ ոչ մեկը»:

**Եղբողք** մարտահրավերը ծագում է Չինաստանից: Կղառնա՞ արդյոք այն ճգնաժամից առավել շահած երկիրը, թե՞ դրա պատճառով կը նկալմած քառոսի մեջ ցանկացած ելք առավել նշանակալի ազդեցություն կգործի աշխարհի իրավիճակի վրա: Այժմ արդեն Պեկինը, Չինաստանում աշխատող օտարերկրյա ձեռնարկությունների պարտկոմների համակարգի միջոցով, ամեն ինչ գիտի նրանց գործարքների ու ֆինանսների մասին: Բացահայտ հայտարարություններ են հնչում այն մասին, թե Չինաստանը չի պատրաստվում օգնել որեւէ մեկին (հարյուր հազարավոր արեւմտյան նման ընկերություններ արդեն փլուզվել են) կամ որեւէ մեկի հետ կիսել իր պահուստները: Գրոհ է նախաձեռնվում դոլարի դեմ, եւ Պեկինը, հենվելով անհասկանալի է, թե ինչի վրա հույսը դրած Մոսկվայի վրա, պահանջում է ԱՄՆ-ի բարեփոխումներ անցկացնել եւ վստահորեն շարժվում է յուանը պահուստային արժույթ դարձնելու ուղղությամբ, դրան զուգընթաց (Պարսից ծոցի երկրների հետ միասին) ամբողջությամբ գնելով Աֆրիկայի ընդերքն ու հողերը: Եթե ՉժՀ-ի համար ամեն ինչ հաջող դասավորվի, դա պարզապես վերադարձ չի լինի այն իրավիճակին, երբ ոչ թե Արեւմուտքը, այլ Արեւելքն էր առաջատարը տեխնիկական առումով: Չինաստանը կատանա մոլորակային մասշտաբի դիկտատորի վերածվելու բոլոր հնարավորությունները: Դակառակ պարագայում, անկում ապրելով՝ այն լրիվ ի վիճակի է իր հետեւից տանել զարգացած պետություններին:

**«Россия в глобальной политике»**

**№ 6, 2009**

**«Դամրապետական», 2010, թ. 1**

## ԹԳՆԱԺԱՄԻ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Դետեւանքները պետության համար

Անցյալի բոլոր ճգնաժամերը որոշակի, երրեսն տարորինակ ազդեցություն են գործել պետական ինստիտուտների վրա: Քիչ հավանական է, որ մերկայիս ճգնաժամը բացառություն լինի:

Ավանդաբար, ճգնաժամերի շրջանում պետական կառույցներն աշխատանքի շուկայում առավել մրցունակ են լինում: «Ղիմակայելով Դաշնային կառավարությունում մարդկային կապիտալի ճգնաժամին» գրքի հեղինակ Զեյ Լեյբովիտցը նշում է, որ հաջողության գաղտնիքը չափազանց պարզ է. պետությունն, ի տարբերություն առեւտրային կառույցների, միշտ իր տնօրինության տակ ունի ֆինանսական պաշարներ եւ կարող է չինովնիկներին երաշխավորել մշտական վարձատրություն ու սոցիալական արտոնություններ: Եթե նույնիսկ պետական աշխատավարձը ցածր է «առեւտրայինից», շատ արհեստավարժներ ընտրություն են կատարում պետության օգտին, քանզի այն խոստանում է մեծ կայունություն (հայտնի է, որ պետական կառույցները մասնավոր ընկերություններից անհամեմատ ավելի հազվադեպ են հաստիքների կրծատում անցկացնում): Այդ պատճառով, ճգնաժամերի շրջանում պետական աշխատանքի համբավը զգալիորեն աճում է:

«ճգնաժամը եւ ծովահրեշը. ամերիկյան կառավարության զարգացման կրիտիկական դրվագները» գրքի հեղինակ Ռոբերտ Ջիբսը նշում է, որ այդ գործընթացների արդյունքը, որպես կանոն, լինում է վարչարարության որակի բարելավումը, ինչը երբեմն հանգեցնում է ողջ պետական ապարատի եւ զինված ուժերի գործունեության դրական փոփոխությունների: Սակայն այս փոփոխությունները չնշին են, իսկ դրանց համար հասարակությունը ստիպված է թանկ վճարել: Ջիբսի կարծիքով, քանի այն է, որ ճգնաժամերի ժամանակ մարդիկ հակված են ավելի վստահել իշխանությանն ու ենթադրել, թե չինովնիկները գործում են առավել արդյունավետ, քան տեղի է ունենում իրականում: Ընդ

որում, տաղանդավոր չինովնիկները, առաջին հերթին, հաջողությամբ լուծում են գուտ վարչարարական խնդիրներ. ճգնաժամերին իշխանական կառույցների չափերը շարունակ աճում են (ԱՄՆ պատմության մեջ դեռ երբեք նրանց չափերը չեն վերադարձել մինչճգնաժամային վիճակին՝ այնպես, ինչպես նրանց լիազորությունները: Այսպիսով, տարօրինակ է, բայց երկարաժամկետ հեռանկարում տաղանդների հոսքը դեպի իշխանություն սույ օժանդակում է իշխանության դեգրադացմանը:

Նմանատիպ փոխակերպությունները տեղի են ունեցել ճգնաժամ ապրած եւ այլ պետություններում: Օրինակ՝ Ռազմավարական եւ միջազգային հետազոտությունների կենտրոնի ուսումնասիրությունը նվիրված էր Ինդոնեզիայի պետական կառավարման որակի վրա ֆինանսական ճգնաժամի ազդեցությանը: Այդ ճգնաժամը բերեց իշխանությունից գեներալ Սուլիսարտոյի հեռացման, որը 1966–1998թ. անփոփոխ դեկավարում էր երկիրը, եւ առաջին ժողովրդավարական ընտրությունների անցկացման: Երկար ժամանակից հետո, առաջին անգամ, իշխանություն նույտք գործեցին բիզնեսի ոլորտի հայրենասիրաբար տրամադրված բազում արհեստավարժ կառավարիչներ: Ինդոնեզական պետական կառավարման որակի գնահատման ժամանակ օգտագործվեցին Համաշխարհային բանկի (ՀԲ) համապատասխան ցուցանիշները. համեմատվեցին միջնաժամային 1996 եւ հետճանաժամային 2005 թվականները: Ինչպես պարզվեց, 2005թ. ցուցանիշը, գործնականում, բոլոր առումներով ավելի վատն էր, ոչ մեծ առաջընթաց գրանցվել էր միայն կոռուպցիայի դեմ պայքարում եւ օրենքի իշխանության ապահովման գործում: Ավելին, ճգնաժամի ժամանակ երկուում իշխանության կենտրոնացման մակարդակն իջել էր, իսկ նրա ավարտից հետո՝ կրկին վերադարձել Սուլիսարտոյի դարաշրջանի մակարդակին:

Տնտեսական ճգնաժամի պայմաններում պետական ինստիտուտները հաճախ լինում են առավել կոռումպացված, ինչը դառնում է տնտեսության վրա նրանց ազդեցության աճի բնական հետեւանք: Հաճախ հենց չինովնիկներից է կախված առեւտրային կառույցների ապագան. օրինակ՝ պետական պատվերների

բաշխումը կամ ֆինանսական օգնության հատկացումը: Դա ստեղծում է սնուցող միջավայր կոռուպցիայի համար: Առաջին ահազանգերն արդեն հնչել են. 2009թ. սկզբին «Transparency International» ազդեցիկ հասարակական կազմակերպությունը զգուշացրեց ողջ աշխարհում կոռուպցիայի հնարավոր աճի մասին:

Տնտեսական ճգնաժամի եւս մեկ դրսեւորում է զինվորական ծառայության ժողովրդականության աճն այն պետություններում, որտեղ բանակը փոխադրվել է արհեստավարժության ռելսերի վրա: Երիտասարդ նարդիկ, որոնց մոտ փոքր են քաղաքացիական կյանքում դրսեւորվելու հնարավորությունները, մեծ հաճույքով են բանակի հետ կնքում պայմանագրեր: Օրինակ՝ 2008թ. վերջին երեք ամիսներին ԱՄՆ բանակը հինգ տարիների ընթացքում առաջին անգամ գերակատարեց զորակոչիկների հավաքագրման պլանը:

Ներկայիս տնտեսական ճգնաժամը նաեւ բացասական ազդեցություն է թողնում բնապահպանական քաղաքականության (օրինակ՝ գլոբալ տաքացման դեմ պայքարի եւ այլընտրանքային էներգետիկայի զարգացման) վրա: Օրինակ՝ «Worldwatch» հետազոտական ինստիտուտը կանխատեսում է, որ ճգնաժամը կհանգեցնի «ջերմոցային գազերի» արտանետումների քանակի էական նվազման, որոնք օժանդակում են գլոբալ տաքացմանը: Այն կապված է արդյունաբերական արտադրության ծավալների կրծատման եւ ավտոմոբիլային վառելիքի սպառնան նվազման հետ: Այս փաստը, ինչպես նաեւ միջազգային ընկերակցության եւ շատ պետությունների դեկավարությունների առաջնայնությունների տեղաշարժը, տաքացման դեմ պայքարը դարձնում են պակաս կարեւոր գործ, որն անխուսափելի հորեն կանդրադառնա համապատասխան հետազոտությունների ու ծրագրերի ֆինանսավորման ծավալների վրա: Համանման պատմություն տեղի ունեցավ այլընտրանքային էներգետիկայի զարգացման հետ. ճգնաժամը բերեց նավթի կտրուկ գնազրկնան, որի պատճառով ավտոմոբիլային բիովառելիքը (սպիրտ, բուսական յուղ եւ այլն) բենզինից թանկ ստացվեց, ինչը նրա արտադրությունը դարձնում է ոչ շահավետ:

2009թ. սկզբին ԱՄՆ Շրջակա միջավայրի պաշտպանության գործակալությունն ուշադրություն դարձրեց եւս մեկ տագնապալի փաստի վրա. հումքի համաշխարհային գների անկումն անշահութաբեր դարձրեց աղբի վերամշակումը: Օդինակ՝ 2008թ. դեկտեմբերին մակուլատուրայի մեկ տոննայի գինն ընկավ մինչեւ 25 դոլար (2007թ. դեկտեմբերի 105 դոլարի դիմաց): Արդյունքում՝ ընկերությունները, որոնք վերամշակում են աղբը, կրում են լուրջ վճասներ եւ նախընտրում են պարզապես պահեստավորել այն: ԱՄՆ տնտեսական ճգնաժամերի պատմությունը ցույց է տալիս, որ դա պվանդական երեւույթ է: Պատմաբան Կառլ Ցիմրինգը «Կանխիկ գումար ձեր աղբի համար. աղբի վերամշակումն Ամերիկայում» գրքում բերում է նմանատիպ բազմաթիվ օրինակներ: Այսպես, 1873թ. ճգնաժամին, մեկ տարուց էլ պակաս ժամանակաշրջացքում, մետաղի ջարդոնի գինն ընկավ երկու անգամ, ինչը հանգեցրեց հարյուրավոր ընկերությունների սնանկացման, որոնք զբաղվում էին թափոնների հավաքնամբ, տեսակավորմամբ ու վերամշակմամբ: Դամանման պատմություն տեղի ունեցավ Մեծ դեպքեսիայի ժամանակ. չորս տարվա ընթացքում (1929–1933թթ.) այդ շուկայի ծավալները նվազեցին տասն անգամ, որի շնորհիվ ԱՄՆ խոշոր քաղաքների մերձակայքերը վերածվեցին վիթխարի աղբանոցների:

### Դետեւանքները հանրության համար

Յուրաքանչյուր տնտեսական ճգնաժամ հանգեցնում է մարդկանց կենսակերպի եւ աշխարհընկալման փոփոխության: Երբեմն այդ փոփոխությունները կարծածամկետ են եւ նվազ նշանակալից, երբեմն՝ չափազանց էական ու երկարաժամկետ:

Ամերիկյան Առողջապահության համակարգի փոփոխությունների ուսումնասիրության կենտրոնի տվյալներով, 2008թ. վերջին ամերիկացիների գործեր 20 տոկոսը բժշկական հաշիվների վճարման հետ կապված դժվարություններ կրեց: Արդյունքում՝ նրանք սահմանափակեցին իրենց կողմից ընդունվող դեղամիջոցների քանակը, սկսեցին բժիշկներին դիմել սոսկ ծայրահեղ անհրաժեշտության դեպքում: Կենտրոնը կանխատեսում է, որ

ճգնաժամի խորացմանը զուգընթաց, այդ միտումները կարող են միայն սաստկանալ: Միաժամանակ, ԱՄՆ առողջապահության նախարարությունը հայտարարեց, որ 2008թ. Միացյալ Նահանգների հոսպիտալները նկատելիորեն քիչ են անցկացրել բուժական գործողություններ եւ «ոչ պարտադիր» վիրահատություններ: ԱՄՆ ճգնաժամի ալիքի վրա սկսեցին քիչ կատարել նաև տեսողության լազերային շտկման ու կոսմետիկ վիրահատություններ:

Նման իրավիճակ ստեղծվում է եւ այլ արդյունաբերական գարգացած պետություններում: Օրինակ՝ Սեռուի ազգային համալսարանի ու ՀԲ համատեղ ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Յարավ. Կորեայի բնակիչները (հատկապես միջին եւ ցածր ապահովության ընտանիքները) ճգնաժամի ազդեցության տակ հիմնովին կրծատել են իրենց բժշկական ծախսերը: Առաջին հերթին, նրանք նախընտրում են տնտեսել բուժ. մասնագետների այցելությունների վրա:

Տնտեսական խնդիրների հետեւանքներից է կրոնի ժողովրդականության աճը: Օրինակ՝ Տեխասի համալսարանի հետազոտությունները ցույց տվեցին, որ ԱՄՆ-ում 1968–2004թ. տեղի ունեցած տնտեսական ճգնաժամների ողջ ժամանակահատվածում բողոքական եկեղեցիների ծխականների թվաքանակը զգալիորեն ավելացել է: Սակայն կան նաև հակառակ տվյալներ. օրինակ՝ Տնտեսական եւ զարգացման ռեսուրսների հետազոտման կենտրոնը վերլուծեց ասիական տնտեսական ճգնաժամի ազդեցությունը Թաիլանդի, Յարավ. Կորեայի եւ Ֆիլիպինների հասարակության վրա: Ինչպես պարզվեց, տնտեսական դժվարությունների ժամանակ նարդիկ սկսել են զգալիորեն հազվադեպ հաճախել եկեղեցի, մզկիթ ու տաճար եւ անգամ քիչ աղոթել: Պատճառը պարզ էր. այդ երկրների շատ բնակիչներ փորձել էին աշխատել երկու եւ ավելի աշխատավայրում, էժան մթերքի ու ապրանքի հայթայթման վրա շատ ժամանակ էին վատնել եւ այլն, ինչը կրծատել էր այն ժամանակը, որը նրանք կարող էին տրամադրել հոգեւոր կյանքին:

Ճգնաժամը, որպես կանոն, հանգեցնում է ռեստորանների, բարերի ու սրճարանների (որտեղ ալկոհոլ է վաճառվում) ժողովրդականության նվազմանը, բայց այն ամեններն էլ չի նպաստում սրափությանը: Սպիրտային օգտագործողները սկսում

Են խանութներից գնել առավել էժանագին խմիչքները՝ նախընտրելով դրանց ամենաէժան տեսակները: Ընդ որում, մարդիկ ավելի շատ են խմում, որպեսզի հանեն սրբեսը եւ տրվեն մռացության: Շատ են սկսում խմել եւ այն մարդիկ, որոնք մինչ դժվար ժամանակների գալը չեն հրապուրվել «ժամանցի» այդ տեսակով:

Այս ֆենոմենը գործնականում նկատվել է աշխարհի բոլոր ոչ մուսուլմանական երկրներում: Օրինակ՝ Արողջապահության համաշխարհային կազմակերպությունը 2004թ. հրապարակեց Արգենտինայի ուսումնասիրության արդյունքները, որը դրանից քիչ առաջ ապրել էր խոշորամասշտար ֆինանսական ճգնաժամ: ճգնաժամի առաջին տարում հաճախունը հասարակական սննդի հիմնարկություններ, որտեղ ալկոհոլ էր վաճառվում, նվազել էր ավելի քան 25 տոկոսով, իսկ գինու խանութներում վաճառքն ավելացել էր 32 տոկոսով: Նման քան տեղի է ունենում եւ այսօր: Օրինակ՝ «Brown-Forman» կորպորացիան, որն արտադրում է այնպիսի խմիչքներ, ինչպիսիք են «Jack Daniels» վիսկին եւ «Finlandia» օղին, 2009թ. սկզբին հայտարարեց վաճառքի կայուն աճի մասին:

Հանցագործության մակարդակի աճի եւ տնտեսական վայրիկերումների միջեւ կապը միանշանակորեն ապացուցված չէ, թեեւ կան շատ գիտնականներ, որոնք համոզված են, որ այն լիովին իրական է: Օրինակ՝ Հետաքննությունների դաշնային բյուրոյի բազմանյա վիճակագրությունը միանշանակ կերպով ցույց է տալիս, որ ֆինանսական ճգնաժամերին զգալիորեն աճում է խարդախությունների թիվը: Քիպորեքային ակտիվների ինստիտուտի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ 2008թ. ԱՄՆ-ում հիպոթեքի հետ կապված խարդախությունների թիվն աճել է 45 տոկոսով: Միաժամանակ, աճում է բռնության (այդ թվում նաև ընտանեկան) մակարդակը: ԱՄՆ Արդարադատության ազգային ինստիտուտի տվյալներով՝ նմանօրինակ հանցագործների թիվը հատկապես կտրուկ աճում է այն ընտանիքներում եւ շրջաններում, որոնք անհամեմատ ավելի են տուժել գործազրկությունից ու եկանուտի նվազումից:

Այս առումով, հատկանշական է յոյու Յորքի պատմությունը: 1970-ական թվականներին այդ մեգապոլիսում հանցագործության

բուրն աճը համընկավ ԱՄՆ խոշորամասշտաբ ճգնաժամի հետ: Ուղղ Սրբիթի ընկերությունները կրեցին կորուստներ, նրանցից ստացվող հարկային մուտքերը նվազեցին, ինչը հանգեցրեց նրան, որ քաղաքապետարանը ստիպված եղավ կրծատել ոստիկանների թիվը եւ չքավորների համար նախատեսված սոցիալական ծրագրերը: Դա բերեց նրան, որ Նյու Յորքում ապրելը դարձավ տիած ու վտանգավոր քաղաքը լքեցին մեկ միլիոնից ավելի մարդ, իիմնականում՝ միջին խավի ներկայացուցիչները: Այն ժամանակ տարածված կարծիք կար (որը, բարերախտաբար, կեղծ դուրս եկավ), թե Նյու Յորքը մեռնում է:

Տնտեսական ճգնաժամը նաեւ օժանդակում է նրան, որ կազմակերպված հանցագործությունը օրինական բիզնես-կառույցների վրա վերահսկողություն հաստատելու հնարավորություն ստանա: Այսպես, Յանցագործության եւ արդարադատության հարցերով ՍԱԿ միջտարածաշրջանային գիտահետազոտական ինստիտուտը պարզել է, որ կազմակերպված հանցագործ խմբավորումները, որոնցից շատերը կապված են թմրանյութերի առեւտրի հետ, այսօր գնում են արժեթղթերի մեջ փաթեթներ ու խնդրահարույց բանկերում կատարում զգալի ֆինանսական ներարկումներ:

Ավանդաբար, տնտեսական ճգնաժամը հանգեցնում է զբոսաշրջիկների թվի կրծատման: Տրամաբանությունն այստեղ բավական պարզ է. Եկամուտների նվազման եւ գործազրկության աճի դեպքում մարդկանց մոտ թիչ ազատ գումար է մնում, որը նրանք կարող են ծախսել հանգստի ու զվարճանքների վրա: Սակայն այս կախվածությունը բացարձակ չէ: Օրինակ՝ Քվինսլենդի համալսարանը վերլուծել է 1990-ական թվականների վերջի ասիական ճգնաժամի հետևանքները միջազգային զբոսաշրջության տեղական արդյունաբերության վրա: Ինչպես պարզվեց, այդ երկրներ այցելած արտասահմանյան զբոսաշրջիկների թիվն իրոք կրծատվել է, բայց այն պետություններում, որոնք դեվալվացրել են իրենց ազգային արժույթը, կտրուկ անկում չի նկատվել, իսկ շուկայի վերականգնումը սկսել է անսպասելիորեն շուտ:

Արտասահմանյան Կրթության ինստիտուտի տվյալները ցույց են տալիս, որ տնտեսական ճգնաժամներին էականորեն

նվազում է արտերկրի բուհերում ուսման մեկնող ուսանողների թիվը: Որպես կանոն, նրանք նախընտրում են առավել հասանելի այլընտրանքներ իրենց մոտ՝ հայրենիքում: Վերջին ամիսներին նաեւ հայտնվեցին լուրեր, որոնք ցույց են տալիս, որ այդ գործնքացն սկսվել է արտասահման ուսման մեկնող երիտասարդների թվաքանակի կտրուկ նվազման մասին արդեն հայտնել են Հարավ. Կորեայի եւ Մալայզիայի իշխանությունները:

Բերկլիի համալսարանի տնտեսագետների ուսումնասիրությունը թույլ տվեց հետեւություն անել, որ տնտեսական ճգնաժամերը հնարավորություն են տալիս դաստիարակել առավել գիտակից սերունդ: Այդ ուսումնասիրության շրջանակներում վերլուծության ենթարկվեցին այն ամերիկացիների մասին տվյալները, որոնց մանկությունը համընկել է Մեծ դեպրեսիայի ժամանակաշրջանին: Ինչպես պարզվեց, այդ մարդկանց մոտ կյանքի հանդեպ վերաբերմունքը տարբերվում է իրենց ծնողների եւ զավակների պահվածքից: «Դեպրեսացված» ամերիկացիներն ավելի հաճախ են հակված ֆինանսական ռիսկերից խուսափելուն (օրինակ՝ նրանք հազվադեպ են կուլ տալիս առավել խարուսիկ առաջարկությունների խայծը), բայց հաճախակի են գումարներ ներդնում արժեթղթերի շուկայում, այլ ոչ թե դրանք պահում խնայատուիթերում:

**Washington ProFile**  
27.02.2009  
«Համբապետական», 2009, թ. 3

## «ԱՇԽԱՐԴԸ ԴԱՐՁԵԼ Է ԱՌԱՎԵԼ ՎՏԱՆԳԱՎՈՐ»

### Մթիվեն Քոհեն

Մթիվեն Քոհեն – ամերիկյան պատմաբան եւ քաղաքագետ, Նյու Յորքի համալսարանի պրոֆեսոր, զբաղվում է Ռուսաստանի վերաբերյալ հետազոտություններով: 2009թ. պարգեւատրվել է ՈԴ «Բարեկամության» շքանշանով:

Սոորու ներկայացնում ենք հատվածներ՝ «Washington Profile» հանդեսին Ա.Քոհենի տված հարցազրույցից:

*Հարց* – Այս տասնամյակի սկզբին ամերիկա-ռուսական հարաբերությունների վերաբերյալ եղան բազում լավատեսական կանխատեսումներ: Խոսում էին «ԱՄՆ-Ռուսաստան ռազմավարական գործընկերության» մասին: Սակայն, արդյունքում, տասնամյակի վերջին Մոսկվայի եւ Վաշինգտոնի միջեւ հարաբերությունները հայտնվեցին խոր ճգնաժամի մեջ: Ի՞նչ տեղի ունեցավ:

*Պատ.* – Դա շատ կարեւոր հարց է, որն ԱՄՆ-ում հաճախ է առաջարկվել, հատկապես վերջին տարիներին: Բայց ԱՄՆ-ում դրան սոսկ մեկ պատասխան է տրվում: Այն հնչում է այսպես. 1990-ական թվականներին նախագահներ Քլինթոնն ու Ելցինը ստեղծեցին ռուս-ամերիկյան գործընկերություն եւ հաստատեցին բարեկամություն. այն ժամանակ ամեն ինչ հիմնալի էր: Ապա Ռուսաստանում իշխանության եկավ Վլադիմիր Պուտինը եւ խորտակեց ամեն ինչ: Եվ դա սիսալ պատասխան է, քանզի այն խնդրի մի մասն է, որն ի հայտ է եկել դեռ Պուտինի ու Զորգ Բուշ-կրտսերի իշխանության գալուց առաջ:

Մեր երկու պետությունների հարաբերությունները 1990-ական թվականներին լրջորեն վնասվեցին, քանզի Քլինթոնի վարչակազմը նախընտրեց Ռուսաստանին վերաբերվել ոչ իբրեւ հավասար գործընկերոջ, այլ որպես պարտված տերության: Տրամաբանությունը հետեւյալն էր. Ռուսաստանը պարտվել է «սառը պատերազմ»՝ իսկ Ամերիկան՝ հաղթել: Հետեւաբար,

Ոուսաստանը գտնվում է Երկրորդ աշխարհամարտից հետո ճապոնիայի ու Գերմանիայի մակարդակին: Արդյունքում՝ Վաշինգտոնը համոզված էր իր իրավունքի մեջ՝ Ոուսաստանին թելադրելու այն, թե ինչ անի ներքին քաղաքականության եւ տնտեսության ոլորտում, եւ այն բանում, որ արտաքին քաղաքական ասպարեզում ռուսական շահերը պետք է նույնական լինեն ամերիկյանին: Այսինքն՝ խնդիրը ծագել է գորեք 20 տարի առաջ, եւ ահա ինչու այն այդշափ լուրջ է:

Ցավալի է, որ երբ հնարավորություն առաջացավ ձերբագատվել 1990-ականների վատ ժառանգությունից եւ խաղն սկսել «մաքուր էջից», այդ հնարավորությունը չօգտագործվեց եւ, դեռ ավելին, իրավիճակը բարդացավ: ԱՄՆ-ի վրա 2001թ. սեպտեմբերի 11-ի գրոհից հետո Կրեմլը, որտեղ այն ժամանակ աշխատում էր Պուտինը, աֆղանական «Թալիբանի» դեմ պայքարում ԱՄՆ-ին ավելի օգնեց, քան աշխարհի ցանկացած այլ պետություն, քան ՆԱՏՕ-ի ցանկացած երկիր: Ոուսաստանն ԱՄՆ-ին ապահովում էր հետախուզական տեղեկատվությամբ, թույլատրում օգտագործել իր օդային տարածքը, ինչը հնարավոր դարձրեց Կենտրոնական Ասիայում ռազմակայանների տեղակայումը: Առավել եւս, Ոուսաստանն անգամ ԱՄՆ տնօրինությանը հանձնեց իր կողմից սատարվող Աֆղանստանի «Հյուսիսային դաշինքի» մարտական ուժերը, որի շնորհիվ ամերիկացիների բազմաթիվ կյանքեր փրկվեցին:

Պուտինը բանականորեն կարծում էր, թե այդ ամենից հետո Միացյալ Նահանգների հետ հարաբերությունները կանցնեն իրական եւ հավասար գործընկերության մակարդակի: Սակայն Ոուսաստանն ի՞նչ ստացավ, երբ «Թալիբանը» հեռացվեց իշխանությունից: Ոուսաստանը հանվեց այն պետությունների ցանկից, որոնք զբաղվում էին Աֆղանստանի քաղաքական կառուցվածքով: ԱՄՆ-ը ցանկացավ Կենտրոնական Ասիայում ունենալ մշտական ռազմակայաններ, թեև նախապես հայտարարել էր, որ այդ կայանները լինելու են միայն ժամանակավոր: ԱՄՆ-ը միակողմանիորեն դուրս եկավ Յակահրթիռային պաշտպանության մասին պայմանագրից, որը Ոուսաստանը համարում էր միջուկային անվտանգության հիմքը: Ավելին, գնալով Քլինտոնի

հետքերով, Բուշի Վարչակազմը ՆԱՏՕ-ն էլ ավելի մոտեցրեց ռուսական սահմաններին:

Հետագայում Պուտինն ասաց, որ Ռուսաստանին դավաճանեցին ու խաբեցին. Եւ դա չափազանց կարեւոր հայտարարություն էր: Երբ 2009թ. սկզբին նախագահ Մեղքեղեւը ժամանեց Վաշինգտոն, նա մասնակցեց Արտաքին հարաբերությունների խորհրդի փորձագետների (Մակեն Օլբրայի գլխավորությամբ) հետ հանդիպմանը: Մեղքեղեւը կրկնեց այդ նույն միտքը Եւ ասաց, որ ԱՄՆ-ը 2001թ. սեպտեմբերի 11-ից հետո բաց թողեց Ռուսաստանի հետ գործընկերության հաստատման հնարավորությունը:

**Դարց – Հաճախ պնդում են, թե Ռուսաստանի նկատմամբ ԱՄՆ քաղաքականությունը մեծ չափով պայմանավորված է Ռուսաստանում հարգի հակաամերիկյան տրամադրություններով, որոնք հաճախակիրուեն իրահրում են ռուսական պետության կողմից վերահսկվող ԶԼՄ-ները: Սեփական բնակչության այդքան լուրջ զաղափարախոսական մշակումից հետո Ռուսաստանն ընդունա՞կ է, արդյոք, սեղմել «բեռնաբափման» կոճակը:**

**Պատ.** – Կրեմլի Եւ այլ պաշտոնական անձանց աջակցությամբ, ռուսական հեռուստաալիքները պարբերաբար ցուցադրում են ծրագրեր, որոնցում Ամերիկան ներկայացվում է բացասական լույսի ներքո: Սակայն Ռուսաստանի բազմաթիվ բացասական պատկերներ հանդիպում են նաև ամերիկյան ԶԼՄ-ներում, TV-ներում Եւ կինոֆիլմերում: Այսինքն՝ նույն բանը երկու երկրներում էլ տեղի է ունենում:

1990-ականների սկզբին, երբ ԽՍՀՄ-ը դադարեցրել էր իր գոյությունը, ԱՍՍ-ում ընդունված էր համարել, որ ռուսների երիտասարդ սերունդը մեր բնական դաշնակիցն է, որովհետեւ նրանք հանդես են գալու հանուն ժողովրդավարության Եւ ազատ շուկայի, մինչդեռ ռուսների ավագ սերունդը բնական դաշնակից չի հանդիսանում: Սակայն 1990-ական թվականների վերջին ռուս երիտասարդության շրջանում հակաամերիկյան տրամադրությունները գործնականում նույնքան հզոր էին, որքան Ռուսաստանի մյուս սերունդների մեջ: Ինչո՞ւ: Որովհետեւ 1990-ականների տնտեսական ճգնաժամը, որը հարվածեց յուրաքանչյուրին,

արդարացիորեն կամ անարդարացիորեն զուգորդվում էր Մոսկվային տրված ամերիկյան խորհուրդների հետ: Կամ վերցնենք 1999թ. Սերբիայի ռմբահարումները: Երիտասարդ մարդիկ դրանց վրդովնունքով արձագանքեցին՝ ճիշտ այնպես, ինչպես տարեցները: Այլ խոսքերով՝ բոլոր երկրներում էլ սերունդների կոնֆլիկտն առկա է, բայց այն մի շարք հիմնարար հարցերում, ինչպիսին են ազգային հպարտությունը, ազգայնականությունը եւ այլն, բացակայում է:

Եթե ԱՄՆ-ը փոխի իր քաղաքականությունը, ապա երիտասարդ ուսւներն ավելի<sup>o</sup> լավ կվերաբերվեն նրա հետ: Պատասխանը մասնակի դրական է: Արդյունքը կախված է երեք գործոններից: Առաջին. ԱՄՆ քաղաքականության մեջ նմանատիպ փոփոխությունների էլուրյան ու մասշտարի հանդեպ ես առանձնակի լավատես չեմ: Երկրորդ. շատ բան կախված է Կրեմլի մերիա քաղաքականությունից: Սա շատ կարեւոր է: Ես հատուկ ընդգծում են ՏՎ-ների նշանակությունը, քանզի ուսւների 85 տոկոսը, այնպես, ինչպես եւ ամերիկացիները, նորություններն ստանում են ՏՎ-ներից, այլ ոչ թե թերթերից:

Երրորդ գործոնը եւս չափազանց լուրջ է: Ամենուրեք, ուր մարդիկ բախվում են տնտեսական ճգնաժամին, նրանք փորձում են կողքից «քավության նոխագ» գտնել: Դա տեղի է ունենում ոչ միայն Ռուսաստանում եւ ԱՄՆ-ում. այն գոյություն է ունեցել միշտ եւ ամենուր: Այսինքն՝ երբ Ռուսաստանի վարչապետ Պուտինն ասում է, թե Ռուսաստանի տնտեսական ճգնաժամը ծնվել է ԱՄՆ-ում, ապա նա միակ մարդը չէ, որ հավատում է դրան: Դետեւաբար, ամերիկյան բանջարանոց է թռչում հերթական քարը, եւ ուսւներն արձագանքում են դրան: Սակայն ԱՄՆ-ում եւս՝ այն չափով, որքանով տնտեսական ճգնաժամը հարվածում է երկրի բնակիչներին, նրանք դառնում են շրջապատող աշխարհի նկատմամբ առավել բացասական տրամադրված:

**Դարձ** – Ներկայիս տնտեսական ճգնաժամն ինչպիսի<sup>o</sup> ազդեցություն կունենա Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ ուժերի ապագա հաշվեկշորի վրա:

**Պատ.** – Ես համոզված եմ, որ այն, իր ողջ նշանակությամբ հանդերձ, սուկ երկրորդական գործոն է: ԱՄՆ-ում լայն տարած-

ված է այն համոզմունքը, թե ճգնաժամի արդյունքում Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը լինելու է առավել համաձայնողական, առավել զիջողական եւ պակաս նպատակասլաց: Ինձ թվում է, որ դա կեղծ պատկերացում է: Այսօր ռուսական արտաքին քաղաքականությունն անդրադարձն է նրա, ինչ տեղի ունեցավ 1990-ական թվականներին եւ 2001թ. սեպտեմբերի 11-ից հետո: Միայն Ռուսաստանի նկատմամբ ամերիկյան քաղաքականության արմատական փոփոխությունները կբերեն ԱՄՆ-ի հանդեպ ռուսական քաղաքականության հիմնարար փոփոխությունների: Ռուսական քաղաքական վերնախավն անհրաժեշտության դեպքում մինչեւ վերջին ռուրլին կծախսի, որպեսզի պաշտպանի այն, ինչն իրեն թվում է որպես արտերկրում ռուսական ազգային շահ: Սովորաբար, ամեն ինչի համար վճարում են հասարակ ռուսները, բայց ինձ չի թվում, թե ճգնաժամը կփոխի ռուսական արտաքին քաղաքականությունը:

Սակայն մի խնդիր Ռուսաստանին դժվար կլինի լուծել՝ արդիականացնել իր զինված ուժերը, որին կոչ է անում նախագահ Մեղվեդեւը: Սա շատ թանկ գրադմունք է, եւ այնքան ժամանակ, քանի դեռ նավթի գներն էականորեն չեն աճել, պետությունը գումար քիչ կունենա: Թերեւս Կրեմլը կշարունակի արդիականացումը երկու պատճառով՝ ռուսական սահմաններին ՆԱՏՕ-ի նոտեցման եւ 2008թ. օգոստոսին Վրաստանուն կատարվածի:

Ենթադրվում է, որ տնտեսական ճգնաժամի ազդեցությունը գերազահատվում է: Փաստորեն, ճգնաժամն ավելի շատ ազդում է ԱՄՆ, քան Ռուսաստանի արտաքին քաղաքականության վրա: ԱՄՆ-ը վարում է երկու պատերազմ՝ Իրաքում եւ Աֆղանստանում: Նախագահ Օբաման հայտարարեց, որ ինքը դուրս է բերելու ամերիկյան զորքերն Իրաքից, սակայն ես վստահ չեմ, թե ննան բան տեղի կունենա՝ առնվազն այն չափով եւ այն գործիկով, որը խոստացվում է: ԱՄՆ-ը ավելի եւ ավելի է խրվում Աֆղանստանի գործերում: Պատերազմն այդ երկրում անհնար է հաղթել ու լինելու է շատ թանկ հաճույք, եւ Ռուսաստանն այդ մասին անհամենատ ավելին գիտի, քան մյուսները:

ԱՄՆ-ին պարզապես չեն բավականացնում գորքերը, եւ դա, ինչպես ինձ թվում է, ազդում է ամերիկյան դիվանագիտության վրա: Լինելով նախագահի թեկնածու՝ Բարաք Օբաման ամե-

թիկյան դիվանագիտական պատմության մեջ նոր դարաշրջանի սկսման կոչ արեց, ինչը ես հակված եմ այս կերպ մեկնաբանել. ամենաշատը հենվել բանակցությունների եւ ամենաքիչը՝ ռազմական հգորության վրա: Սա լավ երեւույթ է, ու եթե տնտեսական ճգնաժամը դրականորեն ազդի նման դիվանագիտության վրա, ու նույնպես լավ է: Յուս կա, որ Կրեմլը դրան համարժեք կերպով կարձագանքի:

*Յարց* – Յանրահայտ կարծիք է, թե Ուսւաստանը դավանում է ներիմակերիալիստական գաղափարախոսություն, ինչն առանձնակիորեն դրսեւորվում է հետխորհրդային պետությունների նկատմամբ քաղաքականության մեջ: Այդ նասին Դուք ի՞նչ եք մտածում:

*Պատ.* – Դա չափազանց կարեւոր հարց է եւ, հնարավոր է, ամենակարեւոր հարցը ամերիկա-ռուսական հարաբերություններում: Այն նախկին խորհրդային հանրապետությունների եւ, հատկապես, Ուկրաինայի ու Վրաստանի հարցն է: Ես չեմ հավատում, թե ամերիկա-ռուսական հարաբերություններում ինչոր հիմնավոր դրական փոփոխություն կլինի, եւ այնքան ժամանակ, քանի դեռ Կրեմլը չի համոզվել, որ Վաշինգտոնն այլեւս չի փորձում Ուկրաինան եւ Վրաստանը դարձնել ՆԱՏՕ-ի անդամներ, իրական գործընկերություն հնարավոր չէ:

Այստեղ առկա է ընկալումների բախում: Սոսկվան ՆԱՏՕ-ի եքսպանսիան համարում է ամերիկյան ինպերիալիզմ, իսկ Վաշինգտոնը Յյուսիսատլանտյան դաշինքի այդ ընդարձակմանը Մոսկվայի բացասական արձագանքն է ընկալում իբրեւ ինպերիալիզմ: Սակայն ի՞նչ է նշանակում «ինպերիալիզմ» հասկացությունը: Ուսւաստանի վերաբերյալ ես գտնում եմ, որ ցանկացած մեծ տերություն, եւ, ընդհանրապես, ցանկացած երկիր ունի սեփական սահմանների անվտանգության իրավունք: Ուստի ոչ ոք չպիտի զարմանա, որ Ուսւաստանին վրդովեցրել է 1990-ական թվականներին նախաձեռնված դեպի արեւելք ՆԱՏՕ-ի ընդարձակումը:

Եթե խոսքը պարզապես Վրաստանում եւ Ուկրաինայում քաղաքական ազդեցության համար մրցակցության նասին է՝ առանց որեւէ խոսակցության ՆԱՏՕ-ին նրանց անդամակցության

վերաբերյալ, ապա դա միանգամայն այլ նյութ է: Սակայն ՆԱՏՕ-ի ընդարձակումը ռազմականացրեց Վրաստանի եւ Ռուբախի համար մրցակցությունն ու դարձավ 2008թ. օգոստոսյան պատերազմի պատճառներից մեկը: Այսօր այն աշխարհի ամենավտանգավոր շրջաններից է: Այո, այդ պատերազմը ռուս-վրացական էր, բայց այն նաև ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի միջեւ միջնորդավորված պատերազմ էր: Մարդիկ պետք է այդ մասին մտածեն:

«Սառը պատերազմի» ժամանակ ԽՍՀՄ-ի եւ ԱՄՆ-ի միջեւ եղան միջնորդավորված պատերազմներ Աֆրիկայում, ուր մենք սատարում էինք մի կողմին, իսկ Մոսկվան՝ մյուս: Նույնը տեղի ունեցավ նաև Աֆղանստանում, որտեղ ԱՄՆ-ը աջակցում էր աֆղաններին, որոնք կրվում էին խորհրդային բռնազավթման դեմ: Ռուսաստանը միջուկային տերություն է, եւ մենք էլ միջուկային տերություն ենք: «Սառը պատերազմի» ժամանակներում անհնար էր, որ կոնֆլիկտը տեղի ունենար ամերիկյան կամ խորհրդային սահմանների մոտ: Այսօր դա տեղի է ունեցել: Եղել է հաղորդագրություն (չգիտեմ՝ ճշմարտացի, թե ոչ), որ երբ սկսվել է պատերազմը Հարավ. Օսիայում, Մոսկվան հրթիռային արձակման կայանքները (ոչ միջուկային մարտագլխիկները) տեղափոխել է Հարավ. Օսիա, քանզի անհանգստացել է, թե ՆԱՏՕ-ն կմիջամտի կոնֆլիկտին:

Եթե բոլորը տեղի է ունեցել հենց այդպես, ապա խորհեք, թե այդ ամենն ինչ վտանգավոր է: Սպառնալիքի մակարդակով՝ այս իրավիճակը մոտ է Կուրայական ճգնաժամին: Դա ցույց է տալիս, որ ներկա պահին որքան վատ են ռուս-ամերիկյան հարաբերությունները եւ ինչու ՆԱՏՕ-ի եքսպանսիան երկու կողմերի համար էլ հիմնական ու առավել կարեւոր խնդիրն է:

Ես արդեն ասացի, որ յուրաքանչյուր պետություն ունի սեփական սահմանների անվտանգությունը հոգալու իրավունք: Դա նշանակում է, որ այդ սահմանների մոտ չպետք է լինեն անցանկալի օտարերկրյա ռազմակայաններ: Հատկապես այն արտերկրյա ուժերի կայանները, որոնց հետ կա պատմական կոնֆլիկտ: Ամերիկյան ին գործընկերներն ու լրագրողներն ինձ հաճախ հարցնում են. ինչո՞ւ է Ռուսաստանն այդպես նյարդայ-նորեն արձագանքում Բալթիայի երկրներում կամ Վրաստանում եւ

Ուկրաինայում ՆԱՏՕ-ի կայաններ ստեղծելու հնարավորությանը: Ես նրանց առաջարկում են պատկերացնել, որ վաղը Կանադայում ու Մեքսիկայում հայտնվում են ռուսական ռազմակայաններ, իսկ Վենեսուելայում կամ Կուբայում՝ հակահրթիռային պաշտպանության համակարգեր: ԱՍՍ նախագահին անվստահություն կիայտնվի, եթե նա դրանց համարժեք չարձագանքի: Այսինքն՝ ձեզ պատկերացրեք Մոսկվայի տեղը:

Ինչպիսի՞ն կարող է լինել պատասխանը: Անձամբ ես կարծում եմ, որ լուծումը կարող է լինել Վաշինգտոնի եւ Մոսկվայի միջեւ համաձայնագիրը, ըստ որի՝ Ռուսաստանը ստանում է Երաշխիքներ, որ իր սահմանների մոտ չեն հայտնվի ՆԱՏՕ-ի կամ Արեւմուտքի այլ Երկրների ռազմակայաններ՝ ներառյալ Բալթիայի Երկրները, որոնք հանդիսանում են ՆԱՏՕ-ի անդամ, բայց դեռևս չունեն ննան կայաններ, թեւ համապատասխան ծրագրեր կան: Բացի այդ, Ուկրաինան եւ Վրաստանը չպետք է դառնան ՆԱՏՕ-ի անդամ: Փոխարենը՝ Մոսկվան պետք է ճանաչի Ուկրաինայի եւ Վրաստանի լիակատար քաղաքական անկախությունը, ինչը նշանակում է այնտեղ անցկացված ընտրությունների արդյունքների անվերապահ ճանաչում: Այսինքն՝ եթե Ուկրաինան ընտրելու է հակառօւս նախագահ, ապա դա վատ է Մոսկվայի համար, սակայն այն չի նշանակելու, թե Ուկրաինան դառնալու է ՆԱՏՕ-ի անդամ: Եվ քանզի Ուկրաինան ու Ռուսաստանը պատճականորեն կապված են, եւ Կիեվը ռուսական էներգակիրների նատակարարումների կարիքն ունի, ամեն ինչ ընթանալու է բնականոն հունով: Այսինքն՝ Ուկրաինան լինելու է ինչ-որ բանով Երկրորդ աշխարհանարտից հետո Ֆինլանդիայի նմանատիպը. Ֆինլանդիայում չկան օտարերկրյա ռազմակայաններ, այն պահպանում է ռազմական չեզքրություն: Դա լինելու է քայլ ճիշտ ուղղությամբ: Բայց եթե ռազմականացվեն այդ հարաբերությունները՝ ռազմակայաններ տեղակայելով ռուսական սահմանների մոտ, ապա իրադրությունը դուրս կգա հսկողությունից եւ կդառնա սպանալից:

Եվ վերջինը: Ռուսաստանին սահմանամերձ բոլոր ոչ մեծ պետությունները, որոնց խոստացված է ՆԱՏՕ-ի անդամություն, Մոսկվայի հետ չեն հաստատում անկախ ու խաղաղ հարաբերություններ, այլ հարվածում են Ռուսաստանի քիմն եւ

թաքնվում ԱՄՆ թիկունքում: Այլ խոսքերով, ո՞չ Բալթիայի երկրները, ո՞չ Ուկրաինան եւ Վրաստանը, չունեն շարժառիթ հաստատելու լիակատար դիվանագիտական հարաբերություններ Ռուսաստանի հետ, քանզի համարում են, որ ԱՄՆ-ը եւ ՆԱՏՕ-ն կզան իրենց օգնության՝ անկախ նրանից, թե իրենք ինչ են արել: Դենց այդ պատճառով էլ հարկավոր է հրաժարվել այնպիսի մտածելակերպից, որը կապված է ՆԱՏՕ-ի ընդարձակման հետ:

*Դարոց* – Վաշինգտոնում ընդգծում են, թե ԱՄՆ-ը ոչ ոքի չի պարտադրում մտնել ՆԱՏՕ, իսկ դաշինքի ընդարձակումն այն պատճառով է, որ հետխորհրդային շատ հանրապետություններ նմանատիպ անդամակցությունը համարում են օգտավետ իրենց համար եւ պետք է ունենան ընտրության իրավունք՝ մտնել, թե չմտնել դաշինքի մեջ: Չեր մեկնաբանությունը:

*Պատ.* – Դաճախ են ասում, թե ցանկացած երկիր իրավունք ունի ձեռք բերել բարեկամներ կամ փորձել ստեղծել քաղաքական դաշինք ցանկացած պետության հետ, որին կամենում է: Ես լիովին համաձայն են դրան: Սակայն երկիրն իրավունք չունի արտաքին ուժ իրավիրել՝ կառուցելու իր տարածքում ռազմակայան, որը սպառնում է հարեւան պետությանը: ՆԱՏՕ-ի էքսպանսիան ռազմականացրել է ԱՄՆ եւ Ռուսաստանի, ԱՄՆ եւ հետխորհրդային պետությունների, Ռուսաստանի եւ մյուս հետխորհրդային հանրապետությունների միջեւ հարաբերությունները: Դարկավոր է կանգնեցնել ՆԱՏՕ-ի էքսպանսիան, վերացնել ռազմական կողմը եւ թույլ տալ նրանց մրցակցել այդ պարադիզմից դուրս: Եթե Մոսկվան ցանկանում է Ուկրաինային արտոնյալ գներով նավթ եւ գազ տալ, եթե Վաշինգտոնը ցանկանում է Ուկրաինային փող տալ, ապա դրանից շահում է Ուկրաինայի ժողովուրդը, որն ավելի լավ կապրի: Այս նույնը ճիշտ է նաև Վրաստանի ժողովրդի համար: Սակայն, այնքան ժամանակ, քանի դեռ շարունակվում է ռազմական մրցակցությունը, ամեն ինչի համար այս ժողովուրդներն են վճարելու:

Գլխավորը, որ մենք պիտի հասկանանք՝ այն է, որ ՆԱՏՕ-ն կյանքը դարձնում է պակաս անվտանգ: Եթե Քլինթոնի ժամանակ Զորջ Ջենանն իմացավ դեպի արեւելք ՆԱՏՕ-ի էքսպանսիայի

մասին, նա հայտարարեց, թե դա վատագույն արտաքին քաղաքական սխալն է, որ ԱՄՆ-ը թույլ է տվել «սառը պատերազմից» ի վեր: Քենանը նիանգամայն ճիշտ էր: ՆԱՏՕ-ի ընդարձակումը բոլորին ստիպեց մոռանալ դիվանագիտության մասին եւ փոխարենը հենվել «ռազմականացված» մտածողության ու ռազմակայանների վրա: Արդյունքում՝ աշխարհը դարձել է առավել վտանգավոր, քան «սառը պատերազմի» ժամանակ էր:

**Washington ProFile**  
08.05.2009  
«Դանրապետական», 2009, թ. 6

## ԵՎՐՈՊԱՅԻ ՄՇՈՒՇՈՏ ԱՊԱԳԱՆ Ապոլոն Դավիթսոն

Ապոլոն Դավիթսոն – Սուկվայի պետական համալսարանի պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ընդհանուր պատմության ինստիտուտի աֆրիկյան հետազոտությունների կենտրոնի ղեկավար:

### Եվրոպայի պատմական հոռետեսությունը

«Ասիան լուսավորեց Եվրոպան, ու Եվրոպան նվաճեց Ասիան: Այժմ Եվրոպան է լուսավորում Ասիան: Կկրկնի՝, արդյոք, Ասիան նույնը Եվրոպայի նկատմամբ», –ապելի քան 100 տարի առաջ, 1904թ. մայիսին այսպես է գրել պատմաբան Վասիլի Կյուչեսկին:

Եթո կես դար ավելի վաղ Ալեքսանդր Գերցենը հավաստում էր, որ Եվրոպան «այլասերվել է»: «Ամեն ինչ արժեզրկվում եւ թոշնում է ուժասպառ հողի վրա. չկան տաղանդներ, չկան ստեղծողներ, չկա մտքի զորություն, չկա կանքի ուժ: Այս աշխարհն ապրել է իր փառքի դարաշրջանը. Շիլերի ու Գյորեի ժամանակն անցել է այնպես, ինչպես Ռաֆայելի եւ Միքելանջելոյի ժամանակը, ինչպես Կոլտերի եւ Ռուսոյի ժամանակը, ինչպես Միրաբոյի եւ Դանտոնի ժամանակը: Արդյունաբերության փայլուն դարաշրջանն անցնում է. այն ապրեցինք այնպես, ինչպես արիստոկրատիայի վեհաշուր ժամանակաշրջանը: Բոլորն աղքատանում են՝ չհարստացնելով ոչ որի»: Եվ ավարտում է. «Մնան բարով, հեռացյալ աշխարհ, մնան բարով, Եվրոպա»:

Դետո, ինչպես հայտնի է, Եվրոպայի մայրամուտն, իր կայսերական նեծությանը հանդերձ, կամխատեսեցին շատերը: Օսվալդ Շպենգլերն իր սառնասիրտ վերլուծությամբ: Նրա հետեւություններին, ըստ էության, միացան ռուս փիլիսոփաներ Նիկոլայ Բերդյաևը, Յակով Բուկշպանը, Ֆյոդոր Ստեպոնը, Սեմյոն Ֆրանկը, ընդ որում՝ արտահայտելով անհուսալի կսկիծ:

Նրանք Շպենգլերի «Եվրոպայի մայրամուտը» գրքին նվիրեցին հոդվածների ժողովածու եւ նրան կոչեցին «Խիզախ մարգարե»: Ստեպունն այսպես բնութագրեց Շպենգլերի աշխատանքը. «Նրա մարգարեության բովանդակությունը եվրոպական մշակույթի վախճանն է: Կանցնեն քիչ հարյուրամյակներ, ու երկրագնդի վրա չի մնա ոչ մի գերմանացի, անգլիացի եւ ֆրանսիացի, ինչպես Հուստինիանոսի ժամանակ չկար այլեւս ոչ մի հռոմեացի»:

Ստեպունը հատկապես առանձնացրեց Շպենգլերի հետեւյալ խոսքերը. «Մահանալով՝ անտիկ աշխարհը չէր իմանում, որ ինքը մահանում է, եւ, ուստի, ըմբոշխնում էր հոգեվարքի յուրաքանչյուր օրը որպես աստծո պարգև: Սակայն մեր պարգեւը սեփական անխուսափելի ճակատագրի կանխատեսման պարգեւն է: Մենք կմեռնենք գիտակցորեն՝ մեր քայլայման ամեն փուլն ուղեկցելով փորձառու բժշկի սուր հայացքով»: Այս բոլոր կանխատեսումներն արվել են անցյալ եւ նախանցյալ դարերում: Սակայն ննան գաղափարները բնորոշ են նաեւ մեր օրերին:

JaLOUSE միջազգային հանդեսում տրվել է կանխատեսում, թե ինչպիսին կլինի 21-րդ դարը: «Եվրոպայի փառահեղ, հաղթական, կապիտալիստական պայծառափայլ կայսրությունների ժամանակաշրջանը, որոնք երեք դար հրի, սրի ու շոգեշարժիչների միջոցով կառավարեցին ողջ մոլորակը, ավարտվում է, ինչպես երբեւ ավարտվեց, «մոլթ դարերի» խավարի մեջ ձուլվեց մեծ Հռոմի դարաշրջանը»: Եվ այնուհետեւ. «Ժամանակակից Արեւմուտքի ճակատագիրը բերում է տիսուր համեմատություններ Հռոմեական կայսրության ողբերգական անկնան հետ...»:

Դեղինակները պնդում են. «Չի անցնի եւ 50 տարի, երբ Բրեժմենի, Նիքոլայի եւ Վիլի Բրանդտի ժամանակաշրջանը կիհշեն որպես մարդկության կողմից կորսված դրախտ: Պարզապես այն պատճառով, որ իհմքերը, որոնց վրա կանգնած էր մեր աշխարհը, այլեւս չեն լինի»: Ինչպիսի՞ն կլինի ապագան: «Պատասխան. «Առանց Արեւմուտքի», «Առանց սպիտակամորթների», «Առանց պետության», «Առանց ժողովրդավարության», «Առանց հավասարության», «Առանց իմաստի»: Եվ «Առանց Ոտուսաստանի»:

Տարբեր բնույթի ահ ու սարսափներին մարդկությունը կարծես թե վարժվել է: Եվ, այնուամենայնիվ, JaLOUSE-ի հոդ-

վածից դժվար է պարզապես խույս տալ: Այդ համարը ստորագրվեց տպագրության 2001թ. օգոստոսի 30-ին, իսկ ընթերցողներն այն ստացան հենց չարաբաստիկ սեպտեմբերի 11-ին...

## Ոչ սպիտակ ռասիզմ

Նոր հարյուրամյակի սկիզբը դրվեց նաեւ հրապարակավ ելույթով, որն ուշադրության արժանացավ աշխարհի շատ երկրներում:

«Մենք պետք է սպիտակամորթներից փոխհատուցում պահանջենք գաղութացման ու ցեղասպանության համար, որոնք նրանք կազմակերպել են մեր հողում», –2001թ. ապրիլի 22-ին, Տրիպոլիում կայացած համաժողովում հայտարարեց լիբիական առաջնորդ Մուամար Քադաֆին: Նա Աֆրիկային կոչ արեց թորափվել սպիտակ մարդկանց մշակութային ժառանգությունից: «Նրանց լեզուն եւ ավանդույթները չեն կարող արտահայտել մեր զգացմունքներն ու մտքերը, ուստի մենք պետք է խոսենք մեր նախնիների լեզվով»: Քադաֆին հիշեցրեց Լիբիայի փորձը, որը 1960-ականների վերջին հասավ երկրից 20 հազարից ավելի սպիտակամորթների, իմանականում՝ իտալացիների վտարմանը: Իր ելույթում Քադաֆին նշեց, որ խոսում է ողջ ոչ սպիտակամորթ բնակչության, նվաստացյալների ու հալածյալների, Աֆրիկայի անունից:

Անշուշտ, մարդաբանների դասակարգմանը, նա, որպես արար, պատկանում է նույն «սպիտակամորթ» ռասային, որին ինքը մեղադրում է: Ու եթե այլեւս կանգնենք ռասաների հակադրման դիրքերում, ինչպես դա անում է Քադաֆին, ապա հարկ կլինի հիշել, որ արաբական ստրկավաճառությունը ծագել է Եվրոպականից անհամենատ ավելի վաղ ու սեւ Աֆրիկային միլիոնավոր մարդկային կյանքեր է արժեցել:

Սակայն, այսպես թե այնպես, այս ճառը բորբոքեց, սաստկացրեց հակասպիտակ, հակաեվրոպական տրամադրությունները Երրորդ աշխարհում: Թեպետ, դրանք առանց այդ էլ իրենց մասին հիշեցրել ու հիշեցնում են: Մի շարք միջազգային համաժողովներում առաջադրում են պահանջներ, որպեսզի

Եվրոպան վճարի հարյուրամյակների գաղութատիրության եւ ստրկավաճառության համար:

Ի՞նչ է, մի՞թե աֆրիկացիներին հեշտ է մոռանալ, թե ինչպես էին դարեր շարունակ ստրուկներով բեռնված նավերն ակոսում Ատլանտիկան, իսկ Աներիկայի պլանտացիաներուն մեռնում իրենց նախնիները:

Չինացիներին, արդյոք, հե՞շտ է մոռանալ, թե ինչպես էր կայսր Վիլհելմ 2-րդը 1900թ. գերմանական եքսպերիցիոն կորպուսին ուղարկելով Չինաստան՝ բարի երթ մաղթում. «Չինայե՛լ: Գերի չվերցնե՛լ: Սպանե՛ք, որքան կարող եք: Ինչպես հազար տարի առաջ, երբ հոները, Աթիլա արքայի գլխավորությամբ, փառքի արժանացան, ինչք լեգենդներում ու հերիաքներում այժմ ել սարսափ է առաջացնում, այնպես էլ «գերմանացի» բառը հաջորդ հազար տարուն պետք է սարսափեցնի Չինաստանին: Մենք պետք է գործենք այնպես, որպեսզի չինացին այլեւս երթեք չհանդգնի խեթ նայել գերմանացուն»:

Էլ ի՞նչ խոսենք Աֆրիկայի մասին: Այդ նույն կայսր Վիլհելմի հրամանով, գերմանական տիրապետության դեմ ապստամբած հերերո (Հարավարեւմտյան Աֆրիկա) ժողովրդին գնդացրային կրակի տակ քշեցին Կալահարի անապատ եւ տասնյակ հազարավոր մարդկանց քաղցի ու ծարավի միջոցով մատնեցին մահվան: Անգամ Գերմանիայի ռայխսկանցլեր Բյուլովը, վրդովվելով, կայսրին ասել է, որ դա չի համապատասխանում պատերազմի վարման օրենքներին: Վիլհելմ 2-րդն անխռով պատասխանել է. «Աֆրիկայում պատերազմի վարման օրենքներին դա համապատասխանուն է»:

Երրորդ աշխարհի ժողովուրդներն անարգված են ոչ միայն այս հրեշավոր հանցագործություններից, հայացքներից, որոնք սովորական են Եվրոպացիների համար: Օրինակ, ոչ Եվրոպացիներին վլողովեցնում է դպրոցական ու համալսարանական բոլոր դասագրքերում ներմուծված այնպիսի հասկացությունը, ինչպիսին է «աշխարհագրական մեծ հայտնագործություններ»-ը. «Այդ ինչո՞ւ եք դուք մեզ հայտնագործել: Մենք այստեղ ապրում ենք»:

## Հակակշիռ Եվրոպոցենտրիզմին

Արժե՞, արդյոք, զարմանալ, որ Եվրոպոցենտրիզմին որպես հակակշիռ՝ ուժեղանում են արեւելացենտրիզմի, արաբացենտրիզմի, իսլամացենտրիզմի, աֆրոցենտրիզմի բազմափասիս ծեւերը։ Անշուշտ, այս գաղափարներն ու տրամադրություններն այսօր չեն ծնվել։ Դեռևս 1923թ. աֆրոամերիկացի Մարկուս Շարպին՝ «Յետ, դեպի Աֆրիկա» շարժման հիմնադիրը, պնդում էր. «Երբ Եվրոպան բնակեցրել էր մարդակերների ռասան, վայրենիների, բարբարոսների եւ հեթանոսների ռասան, Աֆրիկայում ապրում էր սեւամորթ մարդկանց կիրք, արվեստին, գիտությանն ու գրականությանը հոյակապ տիրապետող ռասա»։

Այսօր աֆրիկյան շատ երկրների դպրոցներում եւ համալսարաններում պատմության ուսուցումը հիմնված է պատմաբան Շեյխ Անտա Դիոպի գրքերի վրա։ Նա գտնում է, որ միջերկրածովյան անտիկ քաղաքակրթության հիմքը եղել է Եգիպտոսը, իսկ Եգիպտական քաղաքակրթությունը ստեղծվել է աֆրիկացիների՝ սեւամորթ մարդկանց կողմից։ Ապացույցներից են փարավոնների պատկերներով հին Եգիպտական մետաղադրամները, որոնց դեմքնն երեւուն են նեգրոնիդ գծեր։

Մեծ ժողովրդականություն են Վայելում նաեւ Ֆրանց Ֆանոնի (ծնունդով Մարտինիկից, կես դար առաջ բնակություն է հաստատել Ալժիրում) գաղափարները։ Նրա «Անեքքով խարանվածները» գիրքը դարձել է սեղանի ընթերցարան ոչ միայն Աֆրիկայի ու Արաբական Արեւելքի շատ երկրներում, այլև աֆրոամերիկացիների համար։ Ֆանոնի մոտ «Անեքքով խարանվածները» այն երկրների բնակչությունն են, որոնք եղել են գաղութային ու կախյալ վիճակում։

Ֆանոնն առաջիններից էր, որ ներմուծեց «հակառասիստական ռասիզմ» արտահայտությունը։ Նրա խոսքերով, «հակառասիստական ռասիզմը՝ որպես սեփական մորթը պաշտպանելու ձգտում եւ որպես գաղութային կեղեցմանը գաղութացվածի պատասխան, ինքնին պայքարի հիմնավորումն է»։

Ֆրանց Ֆանոնը մերկացնում է «Եվրոպական մոդելները», «Եվրոպական ոգին», պաշտպանում արեւմտյան մշակույթի արժեքների դեմ ինքնաբուխ բողոքները։ «Գաղութացման ստին

գաղութացվածները պատասխանում են ստով: Շիտակությունը հնարավոր է սոսկ ցեղակիցների հետ, իսկ գաղութարարների հետ հարաբերություններում՝ ինքնամփոփություն եւ գալտնամտություն.. ճշմարիտն այն է, ինչն օգնում է տեղացիներին եւ կործանում օտարերկրացիներին.. Լավ է այն ամենը, ինչը վատ է նրանց համար»:

Գաղութարարի մշակութային արժեքների պարտադրմանը գաղութացվածը պատասխանում է դրանցից լիովին, անվերապահ հրաժարմամբ: «Կեղեքիչների լեզուն հանկարծ սկսում է այրել շուրբերը»: Վրա է հասնում «զավթիչների արժեքներից գլորալ հրաժարումը»: Ու եթե անգամ խոսքը ժամանակակից գիտության ու տեխնիկայի մասին է, «նաև ազգետի ասածը միշտ ընդունվում է կանխակալությանը»: Հաստատելով այդ՝ Ֆանոնը հայտարարում է, թե գաղութացվածների համար միանգանայն օրինաչափ է «ամենատարրական, ամենակողակի, ամենաբազմակողմանի ազգայնականությունը»: Անբողջ վերն ասվածը գրվել է այն ժամանակ Ալժիրում ընթացող արյունահեղ պատերազմի տպավորության տակ: Սակայն Ֆանոնի շատ պնդումներ այժմ ել են կրկնվում:

Եվրատյացության կայացման գործում ոչ քիչ դեր խաղաց Լուիս Ֆարախանը, որն իրեն հայտարեց աֆրոամերիկյան բնակչության առաջնորդ: Նա ռասիզմի մեջ մեղադրեց բոլոր սպիտակամորթներին, այդ բվում նաեւ ԱԱԸ նախագահ Արքահամ Լինքոլնին, որը պայքարում էր ստրկության վերացման համար: Ֆարախանի կողմից ստեղծված սեւամորթ մուսուլմանների «Խսլամի ազգ» շարժումն Ամերիկայի բնակչությանը բաժանեց ստրկատերերի հետնորդների եւ ստրուկների հետնորդների: Դրան համապատասխան, Ֆարախանը հայտարարեց, թե Միացյալ Նահանգները հարկավոր է մասնատել երկու պետության, եւ թող ստրկատերերի հետնորդների պետությունն օգնի ստրուկների հետնորդների պետությանը, մինչեւ նա ոտքի կանգնի: Լուիս Ֆարախանի քաղաքական Մուսուլմանական ծրագրում ասված է, որ սեւամորթների ու սպիտակամորթների խառն ամուսնությունները պետք է արգելվեն, սեւամորթ երեխաններին կարող են ուսուցանել միայն սեւամորթ ուսուցիչները, իսկ ինտեգրման գաղափարը երեսպաշտություն է:

Ինչպես հայտնի է, շատ աֆրոամերիկացիներ իրենց անունը փոխում են աֆրիկանի եւ ասիականի: Բռնցքամարտիկ Կասիուս Քլեյը դարձավ Մոհամեդ Ալի: Ֆիլադելֆիայի Թեմփյան համալսարանի աֆրոամերիկյան հետազոտությունների պրոֆեսոր, նորընծա անվամբ Մոլեֆի Քեթ Ասանտեն դարձավ աֆրոցենտրիզմի գլխավոր գաղափարախոսը: Նրա «Աֆրոցենտրիզմ» գիրքն արդեն անթիվ անգամ վերահրատարակվել է: Իր ընթերցողներին նա խորհուրդ է տալիս. «Եթե Եվրոպացիները ձեզ որպես լավագույն գորոդ ներկայացնում են Շեքսպիրին, իսկ որպես լավագույն կոմպոզիտորներ՝ Բախին, Բեթհովենին, Սոցարտին, դուք պետք է անմիջապես հակադարձեք՝ տալով աֆրիկացի գրողների ու կոմպոզիտորների անուններ»: 2007թ. Ասանտեն լույս ընծայեց «Աֆրիկայի պատմություն» ծավալուն աշխատությունը, որտեղ մերժվում է Եվրոպայի որեւէ վաստակ:

### Ղերերի փոփոխություն

Ֆրանց Ֆանոնի «Անեօքով խարանվածները» գրքի նախաբանում Ժան-Պոլ Սարտրը գրել է. «Եվրոպացիներ, բացեք գիրքը, խորամուխ եղեք: Մի քանի քայլ անելով գիշերային խավարում՝ դուք կելնեք խարույկի մոտ, որի շուրջ խմբվել են ձեզ անծանոթ մարդիկ: Մոտեցեք նրանց, ականջ դրեք նրանց խոսակցությանը: Նրանք խոսում են այն մասին, թե ինչ պիտի անեն ձեր գրասենյակների, դրանք պահպանող վարձկանների հետ... Նրանց լուսավորում եւ ջերմացնում է կրակը, բայց դա ձեր կրակը չէ: Դուք գտնվում եք նրանցից պատկառելի հեռավորության վրա... նայում եք շուրջը, դողում ցրտից: Ղերերի փոփոխություն է»:

Չես ուզում հավատալ նման կանխատեսմանը: Սակայն ոչ-Եվրոպայի դերը շատ արագ աճում է՝ տնտեսապես, քաղաքականապես, մշակություն եւ, հատկապես, ժողովրդագրորեն: Նրանք, որոնց ընդունված է անվանել «սպիտակներ», այլեւս կազմում են մարդկության 1/6 մասից էլ պակաս: Յենց միայն բուն Եվրոպայում արդեն իսկ Ասիայից ու Աֆրիկայից միլիոնավոր եկվորներ կան: Միացյալ Նահանգներում՝ Լատինական Ամերիկայից:

Միատարր Եվրոպական պետությունների դարաշրջանն ավարտվում է: Կարելի<sup>9</sup> է այդպիսին համարել Ֆրանսիան, եթե այնտեղ արդեն գրեթե յոթ միլիոն մուսուլման կա՝ ասիացիներ եւ աֆրիկացիներ:

Պետք է միմյանց հետ խաղաղ գոյակցել, խուսափել միջռասայական կոնֆլիկտներից կամ, գոնե, մեղմացնել դրանք, նվազեցնել դրանց քանակը, դարձնել առավել քիչ վտանգավոր բոլորի համար, ավելի պակաս ողբերգական: Բայց ինչպես: Արդեն չափազանց արագ են այդ գործընթացներն ընթանում աշխարհում: Այնպես արագ, որ թե՛ գիտնականներին, թե՛ քաղաքական գործիչներին դժվար է հասնել նրանց հետեւից, ընթոնել դրանք:

Եթզ երկխոսությունն է, փոխըմբռնումը: Սակայն դրա համար անհրաժեշտ է ճանաչել միմյանց, ինանալ փոխադարձ նախապաշտումների արմատները, հասկանալ ու հարգել նաեւ ուրիշի ճշնարտությունը: Բայց մե՞ծ են, արդյոք, Եվրոպայում ոչ-Եվրոպայի մասին գիտելիքները: Արդյոք չափազանց շա՞տ չէ կրթության Եվրոպական համակարգը կենտրոնացված սեփական պատմության, սեփական մշակույթի վրա: Տարվո՞ւմ է, արդյոք, պայքար սեփական ռասայական նախապաշտումների դեմ:

Եթե դա չլինի, չի հաղթահարվի եւ «հակառասիստական ռասիզմը»:

Այս, Եվրոպայի համար դժվար ժամանակներ են եկել: Բայց նրանք երբեւէ եղե՞լ են ոյուրին ու հասարակ: Ուզում ես հավատալ, որ նա իր արժանի տեղը կգտնի այս հոգետանց աշխարհում: Չե՞ որ Գերցենի հոռետեսական մարզարեությունն, այնուամենայնիվ, չիրականացավ, թեւ այդ ժամանակներից արդեն անցել է ավելի քան 150 տարի:

«Россия в глобальной политике»

№ 2, 2009

«Հանրապետական», 2009, թ. 5

## ՄԻԶՈՒԿԱՅԻՆ ՄՊՉԱՎԱՆՁ

### Դեմքի Քիսինցեր

Ավելի քան երկու հարյուր տարի առաջ փիլիսոփա հմանուիլ Կանտը ձեւակերակ նարոկության հիմնական այլընտրանքը. Եթե համաշխարհային պատմության գագաթնակետը պետք է լինի համընդհանուր խաղաղությունը, ապա ինչպես ոդան հասնել. բարոյական լուսավորման կամ այնպիսի մասշտարի աղետի ճանապարհով, որ այլ ելք լինել պարզապես հնարավոր չէ: Մենք մոտենում ենք այն կետին, երբ, հավանաբար, հարկ է լինելու կատարել այդ ընտրությունը: Դիրոսինայից հետո մենք կանգնել ենք միջուկային դարաշրջանի հիմնարար երկընտրանքի առջեւ. ինչպես կառուցել բարոյական կամ քաղաքական հարաբերություններ ժամանակակից գենքի ավերիչ կարողության եւ հետապնդվող նպատակների միջեւ:

«Սառը պատերազմի» երկրեւեր աշխարհում ախոյաներին հաջողվեց խուսափել այս երկընտրանքից: Երկու կողմերի միջուկային գինանոցները դառնում էին էլ ավելի խոշոր ու կատարելագործված: Եթե չհաշվենք Կարիբյան ճգնաժամը, երբ խորհրդային նարտական ստորաբաժանմանը նախապես թույլատրվել էր ինքնապաշտպանության նպատակով օգտվել առկա միջուկային գենքից, կողմերից ոչ մեկը երբեւից ընդհուպ չի մոտեցել դրա կիրառմանը՝ լինի դա մյուս կողմի դեմ, թե երրորդ երկրների հետ պատերազմներում: Նրանք դժբախտ պատահարների, սխալ գնահատականների եւ չթույլատրված արձակումների կանխման համար փուլ առ փուլ գործողության մեջ դրեցին անվտանգության միջոցների համակարգ:

Սակայն «սառը պատերազմի» ավարտը հանգեցրեց տարօրինակ արդյունքի: Գերտերությունների միջեւ միջուկային պատերազմի սպառնալիքը, մեծ հաշվով, վերացավ: Բայց տեխնոլոգիայի (հատկապես խաղաղ ատոմի) տարածումը միջուկային հզորության ստացումը դարձրեց անհամենատ ավելի իրատեսական: Առավել հստակ գաղափարախոսական բաժանիչ գծերի հայտնվելը եւ տարածաշրջանային հակամարտությունների չլուծված լինելը ստեղծեցին նոր խթաններ միջուկային գենքի

ստացման համար, հատկապես «վտարյալ» երկրների եւ ոչ պետական դերակատարների մոտ: Ենթադրյալ փոխադարձ խոցելիությունը, որը «սառը պատերազմի» տարիներին զարդարել էր երկու կողմերին, միջուկային դաշտում նոր խաղաղողների (առավել եւս՝ ոչ պետական դերակատարների) համար ամենեւին չի կարող նույնքան կարեւոր գործոն հանդիսանալ:

Միջուկային գենքի հնարավոր հետագա տարածումը մեծացնում է միջուկային առճակատման հավանականությունը եւ գիտակցված կամ չգիտակցված սադրանքների վտանգը: Իսկ եթե բոլոր շարունակվող բանակցությունների խորապատկերի վրա՝ իրանում սկսվի միջուկային գենքի մշակումը եւ շարունակվի Յուս. Կորեայում, ապա մյուս երկրների մոտ նրանց օրինակին հետեւելու ամենալուրջ հիմքեր կառաջանան:

«Առանց միջուկային գենքի աշխարհը» կմնա հեռավոր ապագային, եթե չդադարեցվեն իրանի (մշակվող) եւ Յուս. Կորեայի (արդեն գոյություն ունեցող) միջուկային ծրագրերը: Դրանցից յուրաքանչյուրը գրեթե հաստատապես կհանգեցնի միջուկային գենքի հետագա տարածմանը եւ ապագայում միջուկային պետությունների ռազմավարության մեջ նրա ներառմանը: Իրանի դեպքում՝ Անվտանգության խորհրդի մշտական անդամները կոչ արեցին դադարեցնել նյութերի հարստացումը, որոնք արտադրվում էին ատոմային էներգետիկայի նպատակների համար ծրագրի շրջանակներում: Յուս. Կորեայի դեպքում՝ Չինաստանը, Ռուսաստանը, ճապոնիան, Ճարավ. Կորեան ու Սինայալ Նահանգները պահանջեցին ոչնչացնել նրա միջուկային գենքը: Յուս. Կորեան համաձայնեց դադարեցնել միջուկային ծրագիրը, սակայն, մշտապես հետաձգելով այդ քայլը, սպառնում է օրինականացնել իր՝ արդեն իսկ ստեղծած միջուկային գինանոցը:

Ես վաղուց եմ հանդես գալիս հարցերի լայն շրջանակների (ներայալ աշխարհաքաղաքական) շուրջ իրանի հետ բանակցությունների օգտին: Շատերը դա համարում են յուրատեսակ հոգեբանական փորձություն: Իրականում, նրանց արդյունավետության չափանիշը կլինեն հստակ պատասխանները չորս միանգամայն որոշակի հարցերին.

ա) որքա՞ն է իրանը մոտ միջուկային ներուժի ստեղծմանը,

բ) ինչպիսի՝ տեմպերով է ընթանում նրա ծրագրի մշակումը,

գ) ազդակների ու պատժամիջոցների ինչպիսի՝ հարաբերակցությունը կորողի իրանին հրաժարվել ծրագրից,

դ) ի՞նչ պիտի անենք, եթե, չնայած մեր բոլոր ջանքերին, դիվանագիտությունը չքերի ցանկալի արդյունը:

Չտարածման ռազմավարության կարեւոր կրիտիկական տարրը կլինի միջազգային հանրության ունակությունը՝ վերահսկողություն հաստատելու միջուկային վառելիքային ցիկլ վրա: Ընդունակ՝ է, արդյոք, Աստոմային էներգիայի միջազգային գործակալությունը ստեղծել հանակարգ, որը միջազգային վերահսկողություն կսահմանի պլուտոնիումի հարստացման ու վերամշակման վրա եւ այդ պրոցեսները կտեղափոխի այնտեղ, ուր միջուկային գենքի տարածման հավանականությունը հասցված է զրոյի:

Միջուկային գենքի տարածումը դադարեցնելու եւ նրա ոչնչացմանը ձեռնամուխ լինելու համար միջուկային «հին» տերությունները պետք է իրենց վրա առանձնակի պատասխանատվություն վերցնեն: Նրանք չունեն առավել կենսական ընդհանուր շահ, քան միջուկային գենքով նոր պետությունների առաջացման կանխումը: Չլուծված տարածաշրջանային հակամարտությունների առկայությունը միջուկային գենքը դարձնում է մեծ գայթակղություն աշխարհի շատ նասերում. նրանով կարելի է վախեցնել հարեւաններին ու զսպել մեծ տերություններին, որոնք, հակառակ դեպքում, կարող են միջանտել տարածաշրջանային հակամարտությանը: Միջուկային «հին» տերությունները պետք է ձգտեն նվազեցնել միջուկային հզորության գրավչությունը՝ դիվանագիտական ջանքեր գործադրելով առկա հակամարտությունների լուծման ուղղությամբ:

Միջուկային ոլորտի նոր օրակարգը պահանջում է.

ա) ամերիկա-ռուսական համագործակցություն,

բ) համատեղ ջանքեր դաշնակիցների, ինչպես եւ՝ այլ ոչ միջուկային պետությունների հետ, որոնց համար զսպնան ամերիկյան ներուժը ծառայում է որպես սեփական անվտանգության ապահովման միջոց,

գ) գլոբալ հարթությունում միջուկային գենքի եւ նյութերի հուսալի պահպաննան ապահովում,

դ) միջուկային պետությունների համապատասխան դրկտրիններում միջուկային գենքի դերի նվազեցում:

Երեսուն տարուց ավելի խորհրդային վտանգը եղել է Արեւմուտքի միջուկային քաղաքականությունը հիմնավորող եւ միավորող ուժը: Այսօր, երբ Խորհրդային Միությունն այլեւս գոյություն չունի, կարեւոր է զգուշացնել ինքնին կատարվող մարդարեւության վրա քաղաքականության ձեւավորման անթույլատրելիության մասին: Ռուսաստանը եւ Միացյալ Նահանգները միասին վերահսկում են համաշխարհային միջուկային գինանոցի շուրջ 90 տոկոսը: Տրանս ուժը ներում է Երկկողմանի հարաբերություններում նվազեցնելու միջուկային գենքի դերը: Եվ դա նրանք վերջին 15 տարիներին անում են այնպիսի նախաձեռնությունների շրջանակներում, ինչպիսին է «Հանուն վտանգի համատեղ նվազեցնան» ծրագիրը: Ներկա պահին, նախեւառաջ, անհրաժեշտ է սկսել ՀՍԿ-1 (հարձակողական սպառագինությունների կրծատում) պայմանագրի երկարացման վրա աշխատանքները. միակ փաստաթուղթը, որը սահմանում է ռազմավարական սպառագինությունների որոշված չափերի վերիքիկացման ու մոնիթորինգի կարգը, որի գործողության ժամկետը լրանում է 2009թ. վերջին: Դա առիթ կհանդիսանա քննարկելու մարտագլխիկների թվի զգալի կրծատման (2002թ. Մոսկվայի պայմանագրով սահմանված 1700-2000 միավորի համեմատ) հարցը:

Վաղուց առանցքային խնդիր է հանդիսանում հակահրթիռային պաշտպանությունը՝ հատկապես այն, որը վերաբերում է միջուկային տեխնոլոգիաներ տարածող երկրներից եկող սպառնալիքներին: Այս թեմայով երկխոսությունը պետք է սկսել այն կետից, որտեղ 2008թ. ապրիլին այն ընդհատել էին նախագահներ Բուշը եւ Պուտինը: Մերձավոր Արեւելքից եկող սպառնալիքներին դիմագրավելու համար հակահրթիռային պաշտպանության համատեղ համակարգի ստեղծման մասին ռուսական առաջարկությունը, որը նախատեսում է ռադիոտեղորշիչ կայանի օգտագործում Ռուսաստանի հարավում, ինձ

թվացել է որպես քաղաքական ու ռազմավարական ստեղծագործական պատասխան ընդհանուր խնդրին:

Միջուկային ոլորտի նոր օրակարգի մշակմանն ուղղված ջանքերը պետք է ամենասկզբից ենթադրեին մեր դաշնակիցների մասնակցությունը: ԱՄՍ քաղաքականությունն անբաժան է ՆԱՏՕ քաղաքականությունից: Եվրոպական առանցքային երկրներն իրանի հետ միջուկային խնդրով բանակցություններ են վարում: Ամերիկան մարտավարական միջուկային գենք է տեղակայում ՆԱՏՕ մի շարք երկրներում, իսկ ՆԱՏՕ հրչակագրային քաղաքականությունն արտացոլում է Միացյալ Նահանգների համանան քաղաքականությունը: Բրիտանիան ու Ֆրանսիան՝ ՆԱՏՕ գծով կարեւոր դաշնակիցները, ունեն զսպման սեփական ներուժ: Անհրաժեշտ է ընդհանուր ջանքերով ադապտացվել նոր իրողություններին, հատկապես երբ այն վերաբերում է մարտավարական միջուկային գենքին: Անհրաժեշտ է ճապոնիայի, Ճարավ. Կորեայի եւ Ավստրալիայի հետ անցկացնել զուգահեռ խորհրդակցություններ: Նման խորհրդակցություններ պարտադիր կերպով պետք են նաև Չինաստանի, Հնդկաստանի ու Պակիստանի հետ:

Վերջում նշենք, որ թեման, ի սկզբանե լինելով ռազմական փորձագետների սեփականությունը, իր վրա է հրավիրել զինաթափման կողմնակիցների համակ ուշադրությունը: Նրանց միջեւ երկխոսությունը ոչ միշտ է եղել այնքան արգասավոր, որքան պետք էր: Ռազմավարները կասկածով են վերաբերվում բանակցությունների ճանապարհով զինանոցների կրծատման փորձերին: Չինաթափման կողմնակիցները երբեմն փորձում են բանավեճերի ելքը կամխորոշել սահմանափակումների օրենսդրական ծեւակերպման ճանապարհով՝ այն սկզբունքով, որ այն ամենը, ինչն օժանդակում է միջուկային զինանոցի սահմանափակմանը, ինքնին բարիք է:

Անհրաժեշտ է երկխոսություն հաստատել այդ երկու խմբերի միջեւ: Քանի դեռ մյուս երկրներն ավելացնում եւ կատարելագործում են իրենց միջուկային զինանոցները, դրանց կիրառման զսպումը պետք է մնա արեւմտյան ռազմավարության մի մասը: Անհրաժեշտ է պահպանել մեր գենքի արդյունավետությունը: Ծրագիրը, որի ուրվագծերը վերը ներկայացվեցին,

միակողմանի զինաթափում չի ենթադրում: Միացյալ Նահանգները չեն կարող դրան միայնակ հասնել:

Միջուկային գենքը ստեղծում է աննախարեավ սպառնալիք: Այն չպետք է ընդգրկվի ռազմավարության մեջ որպես եւս մեկ՝ պարզապես առավել արդյունավետ գենքի տեսակ: Այդպիսով, մենք Վերադառնում ենք սկզբնական մարտահրավերին:

Մեր դարն աստվածներից գողացավ կրակը. կսովորե՞նք, արդյոք, մենք նրա կիրառումը սահմանափակել միայն խաղաղ նպատակներով, քանի դեռ այն մեզ չի խժուել:

«Newsweek»  
փետրվար, 2009  
«Դանրապետական», 2009, թ. 2

## ԱՆԱՎԱՐՏ «ՍԱՌՈ ՊԱՏԵՐԱԶՄ» Սերգեյ Կարագանով

### Մոգական ինք թիվը

Լրանում է «սառը պատերազմի» ավարտը խորհրդանշող իրադարձության՝ Բեռլինյան պատի անկման 20 տարին: Այս հոբելյանը գլխավորն է իրադարձությունների կլոր տարեթվերի գրեթե մոգական դիտվող զուգակցության մեջ, որը սահմանեց այն քաղաքական կարգը (կամ անկարգությունը), ուր մենք ապրում ենք:

1919թ. – կնքվեց անարդարացի Վերսալյան հաշտությունը՝ Գերմանիան վերածելով ռեւիզիոնիստական, իսկ հետագայում՝ նաեւ ռեւանշիստական պետության:

1929թ. – բռնկվեց մեծ ճգնաժամը՝ կտրուկ սրելով միջպետական մրցակցությունը:

1939թ. – սանձազերծվեց Երկրորդ աշխարհամարտը՝ դաշնալով նախորդ Երկու իրադարձությունների տրամաբանական արդյունքը:

1949թ. – հիմնվեց ՆԱՏՕ-ն, որը Եվրոպայուն դրեց համակարգային դիմակայության սկիզբը:

Նույն տարում հռչակվեց Չինաստանի ժողովրդական Հանրապետությունը: Այս իրադարձությունը ընդունվեց սուկ որպես կոմունիստական սպառնալիքի աճի հերթական նշան: Կես դար անց պարզվեց, որ այն ժամանակ սկսվել էր մեծ պետության, անցյալում եւ ապագայում աշխարհի առաջատարներից մեկի՝ Կենտրոնական կայսրության վերականգնումը:

1959թ. – ապստամբների կողմից (Ֆիդել Կաստրոյի գլխավորությամբ) Հավանայի գրավումը: Այն դարձավ գաղափարախոսական դիմակայության գոտու մասշտաբային ընդլայնման նախանշանը: Իսկ բացի այդ, վկայեց նաեւ Երրորդ աշխարհում ազգային ինքնագիտակցության կտրուկ աճի մասին, ինչը հաջորդ մի քանի տարիներին հանգեցրեց տասնյակ նորանկախ պետությունների առաջացմանը: Նրանցից ամենեւին ոչ բոլորը ժամանակի ընթացքում ապացուցեցին իրենց

կենսունակությունը, եւ դա նաեւ կանխորոշեց այսօրվա շատ խնդիրները:

1969թ. – ԽՍՀՄ-ի եւ ՉԺՀ-ի միջեւ կարճատեր, սակայն կատաղի ռազմական բախում Դամանյան կղզու շուրջ: Ինքնին այս իրադրությունը հազիվ թե հավակներ համաշխարհային ծանաչման, եթե նրան շուտով չհետեւեր Պեկինի ու Վաշինգտոնի պատմական հաշտությունը:

1979թ. – ԽՍՀՄ հեղափոխությունն իրանում, որը բախուրոշ նշանակություն ունեցավ տարածաշրջանի եւ ողջ մուսուլմանական աշխարհի համար: Նույն թվականին իրականացվեց Խորհրդային Միության ճակատագրական ներխուժումն Աֆղանստան:

1989թ. – կոմունիստական ճամբարի փլուզումը Եվրոպայում. «Դամերաշխության» կառավարությունը Լեհաստանում, Բեռլինյան պատի անկումը, «Թավշյա» հեղափոխությունը Չեխովակակիայում, ռումինական ղեկավար Նիկոլաե Չառչեսկուի արյունոտ վախճանը: Յենց այն ժամանակ, ելույթ ունենալով Կոսովոյի դաշտի ճակատամարտի 600-ամյակին, սերբական առաջնորդ Սլոբոդան Միլոշեviչը շարադրեց ազգայնական ծրագիրը, որի կենսագործման փորձը հանգեցրեց հաջորդ տասնամյակի ցնցումներին:

1999թ. – ԱՄՆ-ն ու Եվրոպական Երկրները, արքեցած «սառը պատերազմում» տարած հաղթանակի զգացողությամբ, իրենց իրավացիության եւ անպատճելիության գիտակցմանը, հարձակվեցին Զարավսլավիայի վրա: Արեւմուտքի նկատմամբ Ռուսաստանի վերաբերմունքի մեջ տեղի ունեցավ հոգեբանական բեկում: Մոսկվայում իրենց վրա ընդունեցին Բելգրադի ռմբահարումները: Սկսվեց մի գործընթաց, որը հանգեցրեց Ռուսաստանի ու ՆԱՏՕ-ի միջեւ օտարման:

Երկրորդ աշխարհամարտից հետո առաջին անգամ Եվրոպայում մի երկիրը կամ երկրների խումբը հարձակվեց մյուսի վրա: «Սառը պատերազմի» տարիներին խայտառակ դրվագներ հերիքում էին. 1940-ականների կեսին անգլիական էքսպեդիցիոն կորպուսի կողմից Հունաստանում կոմունիստական պարտիզանական շարժման ջախջախումը, 1953թ. Գերմանիայում բանվորական ցույցի գնդակոծումը, 1956թ. Խորհրդային տանկերի

կողմից բուդապեշտյան ապստամբության ճնշումը, 1961թ. Մոսկվայի աջակցությանք Բեռլինյան պատի կառուցումը, 1968թ. ԽՍՀՄ եւ նրա դաշնակիցների գործերի ներխուժումը Չեխովուրվակիա՝ վերջ տալու «պրահյան գարնանը»: Այնուամենայնիվ, գործը խաղաղ քաղաքների օդային հարվածներին չէր հասել:

## Անավարտ դիմակայություն

Կոմունիստական մոդելի փլուզումից հետո թվում էր, թե վերջնականապես հաղթել է ամերիկա-Եվրոպական ուղղության ազատական ժողովրդավարությունը: Բայց անցած տարիների փորձը ցույց տվեց, որ քաղաքական-տնտեսական կառուցվածքի տվյալ ձեւն արմատավորվում է միայն Կենտրոնական Եւ Արեւելյան Եվրոպայի երկրներում: Դրա համար նրանց ցույց է տրվում լայնածավալ տնտեսական օգնություն, որին նրանք գոհաբերել են իրենց անկախության մի մասը:

Խիստ հավանական է, որ ռուսական նոր վերնախավը եւս պատրաստ էր գնալ այդ ուղիով: 1990-ականների սկզբին Արեւմուտքի հետ միավորման վրա վիթխարի՝ այժմ արդեն ծիծաղելի թվացող հոլուսեր էին դնում: Խսոսում էին անգամ ՆԱՏՕ մտնելու ցանկության (այդպիսի հայտարարություններ հնչում էին նախագահ Բորիս Ելցինի եւ փոխնախագահ Վլեբսանդը Ռուսկոյի շուրջերից) ու Եվրոպական միության անդամ դառնալու ձգտման (վարչապետ Վիկտոր Չեռնոմիրյին) մասին: Դժվար է գնահատել, թե որքան լրջորեն էին Արեւմուտքում քննարկվում նման սցենարները, սակայն որոշումը եղավ մերժողական: Ակնհայտ է՝ այնտեղ գտան, որ Ռուսաստանը՝ որպես ինտեգրման օբյեկտ, չափագանց թանկ է, մեծ եւ պրտենցիալ ինքնուրույն:

Բոլորից շատ շահեց Գերմանիան՝ հասնելով ազգային միասնության: Գիտակցաբար իրեն «ընկրմելով» Եվրոպայի մեջ, նրան տալով իր անկախության մի մասը՝ այդ երկիրը վերածվեց լավագույն խորհրդանշիչի, որ կա նոր Եվրոպական մշակույթում: Չնայած Գերմանիայի աճող տնտեսական հզորությանը, այլեւս ոչ ոք նրա ռեւանշիզմից չի վախենում:

Արեւմության Եվրոպան, շնորհիվ ինտեգրման նախագծի, կարողացավ հաղթահարել արյունալի անցյալը: Թվում էր, թե

Բեռլինյան պատի խորտակմամբ ողջ Եվրոպան արդեն հասել է կանույան «հավերժական խաղաղությանը», իսկ երկրագնդի վրա եկել է անդրդի ու բարգավաճման ժամանակաշրջանը: Նշենք, որ «սառը պատերազմից» դուրս գալու արդյունքը եղավ ոչ միայն պատմական թշնամիների՝ գերմանացիների եւ ֆրանսիացիների, այլև գերմանացիների եւ ռուսների հաշտեցումը՝ չնայած 20-րդ դարի թշնամանքի ամենասուկալի պատմությանը:

Սակայն բեկումնային 20-ամյակի վերջին պարզվեց, որ Եվրոպան, այնուամենայնիվ, չի կարողացել կտրվել իր անցյալից: «Պատմության ավարտի» փոխարեն մենք տեսնում ենք իին աշխարհաքաղաքականության վերադարձ՝ բազմապատկված նոր մարտահրավերներով, որոնք շատանում են, բայց, որպես կանոն, չեն լուծում սրված խնդիրները եւ կուտակվում են միմյանց վրա: Դիմակայությունն ու պառակտումը նոր ձեւով են վերածնվում: Իսկ 1990-ականների գլխավոր նվաճումը՝ ռազմական սպառնալիքի եւ համակարգային զինված դիմակայության վերացումը, կարող են լինել անցողիկ: Պատճառն այն է, որ թեեւ «սառը պատերազմը» Եվրոպայում հայտարարված է ավարտված, բայց, ըստ էության, դեռեւս անվարտ է:

Խորհրդային Միությունը կամավոր հեռացավ Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայից: Մոսկվան, Եվրոպական շատ մայրաքաղաքների (հատկապես Փարիզի ու Լոնդոնի) կոչերին հակառակ, թույլատրեց Գերմանիայի միավորումը եւ անգամ օժանդակեց դրան: Այդ ժամանակվա ռուսական քաղաքական դասը, ըստ էության, ԽՍՀՄ փլուզման, ռուսական պատմական տարածքների կորստի նախաձեռնողը եղավ: Դա արվեց ոչ միայն թերանտության կամ հայրենիքի զգացումի կորստի կամ էլ նոր ընտրախավերի՝ իշխանության գալու ձգտման պատճառով. գլխավոր պատճառը խորհրդային կոմունիզմից արագ թռափելու ցանկությունն էր:

Յրաժարվելով կայսրությունից (անգամ այն մասից, որն ընկալվում էր որպես սեփական երկրի պատմական տարածք)` ռուսներն «ընդհանուր Եվրոպական տան» նոր դարաշրջանի գալստյան, «միասնական եւ ազատ Եվրոպայի» կերտման հույսն ունեին: Դա ոչ միայն բարեհոգի ինքնախարբեություն էր: Այդպիսի Եվրոպայի մասին այն ժամանակ բոլորն էին խոսում: Ուստի

Կրեմլին թվաց, թե արեւմտյան ինստիտուտների, նախեւառաջ, ՆԱՏՕ-ի ընդարձակման գրավոր երաշխավորություններ պետք չեն եւ բավարար են Միացյալ Նահանգների ու Գերմանիայի առաջնորդների բանավոր խոստումները:

Ուստի ոչ միայն կրեցին կոմունիստական դիկտատուրայի հիմնական լուծը, այլև արեցին ավելին, քան որեւէ այլ ժողովուրդ, որպեսզի այն տապալվի: Ուստի «սառը պատերազմից» նրանք դուրս եկան իրենց պարտված չզգալով եւ պատվավոր խաղաղության ակնկալիքով: Սակայն Արեւմուտքն, առաջին տարիների տատանումներից հետո, սկսեց իրեն պահել իբրեւ հաղորդի, իսկ ԽՍՀՄ-ի կողմից թողնված տարածքները դիտել ոչ որպես կամովին ազատած, այլ գրավյալ:

1990-ականների կեսին վերցվեց ՆԱՏՕ-ի ընդլայննան ուղեգիծ: Դաշինքի ընդարձակման առաջին ու երկրորդ ալիքների տակ գաղափարախոսական կամ նույնիսկ ռազմական հենք չկար, փոխարենը բավականացնում էր ձեռք բերվածն աշխարհաքաղաքականորեն ամրագրելու ցանկությունը՝ օգտվելով Ուստատանի թուլությունից ու երկրում տիրող քառսից:

### Առճակատումը վերականգնելու փորձ

ՆԱՏՕ-ի ընդարձակման առաջին ալիքի տարիներին այս տողերի հեղինակն արեւմտյան զրուցակիցներին բազմիցս հարց է տվել. մի՞թե դուք չեք հասկանում, որ մեծ պատմությամբ հսկայական երկիրը կը մը բռնաւանա ու երթեք չի համաձայնվի իր պատմական սահմանների վրա դաշինքի ընդարձակմանը: Զրուցակիցներս լուր համաձայնվում էին կամ հեռացնում հայացքը՝ գուր հոլյուվ, թե «Ծշմարտության պահը» չի գա եւ տերությունը երթեք չի հիշի իր կենսականորեն կարեւոր շահերի մասին:

Մինչդեռ, Յյուսիսատլանտյան դաշինքը հակակոմունիստական պաշտպանական միությունից, ինչպիսին «սառը պատերազմի» տարիներին էր, վերածվեց հարձակողականի: Չարժե մոռանալ, որ վերջին 10 տարիների երեք խոշոր պատերազմները սկսել են հենց ՆԱՏՕ-ի երկրները: Դաշինքն ագրեսիա իրականացրեց Քարավլավիայի դեմ՝ նրանից

անջատելով Կոսովոն: Հյուսիսատլանտյան դաշինքի առաջատարը դաշնակիցների խմբով հարձակվեց Իրաքի վրա: ՆԱՏՕ-ն (ճիշտ է՝ միջազգային համաձայնությամբ), ըստ Էռլյան, հարձակողական պատերազմ է վարում իր պատասխանատվության սկզբնական գոտուց հեռու՝ Աֆղանստանում: Ախորժակաները բացվում են: Զգտելով ապացուցել իր օգտակարությունը՝ բյուրոկրատիան փորձում է դաշինքը դարձնել «Էներգետիկական», որը ռազմաքաղաքական մեթոդներով կապահովի մյուս երկրների տարածքում գտնվող պաշտոների (նույնիսկ «արկտիկական») հասանելիությունը:

Ծնորհիվ ռուսական սահմանների մոտ էքսպանսիայի ու երկրների ներքաշնան, որոնց վերնախավերի մի մասը նախորդ դարերի անհաջողությունների եւ պարտությունների պատճառով Ռուսաստանի հանդեպ պատճական բարդույթներ ունի, ՆԱՏՕ-ում սաստկանում են հակառակական տրամադրությունները: Նման երկրների թվի ավելացնան չափով էլ օրյեկտիվորեն աճում է ճնշումը, որպեսզի դաշինքը վերադարձվի Մոսկվայի զսպման իր դասական խնդրին: Կերպարի բարելավման ջանքերին հակառակ, ՆԱՏՕ-ն ռուսների աշքին դիմում է անհամեմատ ավելի թշնամական կազմավորում, քան նախորդ 20 տարիներին էր: Ես հեռու եմ նրանից, որպեսզի պնդեմ, թե դաշինքը սպառնում է կամ կարող է սպառնալ Ռուսաստանին: Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպությունն անցյալում էլ ի վիճակի չի եղել արդյունավետ կռվել: Դա, առավել եւս, ծշմարիտ է այժմ, ինչը ցույց է տալիս Աֆղանստանը:

Քաղաքականապես ՆԱՏՕ-ի ընդարձակումը վերածվել է Եվրոպական անվտանգության հիմնական սպառնալիքի: Դրա պատճառով «հին Արեւելքի» (ԽՍՀՄ-ն ու նրա արքանյակները) եւ «հին Արեւմուտքի» միջեւ դադարած առճակատումը փոխարինվում է նորով. մի կողմից՝ Ռուսաստանը, մյուս կողմից՝ Միացյալ Նահանգներն ու «նոր» Եվրոպացիների մի մասը: «Հին» Եվրոպան պատանդ է հանդիսանում եւ հեռու գնալ չի կարող: Եվ այս դիմակայությունը ծնվում է իրոք փոփոխվող, առավել անկայուն ու վտանգավոր աշխարհի խորապատկերի վրա:

«Սառը պատերազմը», քաղաքական խավերի (այդ թվում՝ ռուսական) ուղեղներում լինելով անավարտ, անավարտ է նաեւ

ինստիտուցիոնալ եւ կազմակերպական առումով: Եվ «սառը պատերազմի» ինստիտուտները, առաջին հերթին՝ ՆԱՏՕ-ն, ինչպեսև Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպությունը, որոնք սկզբնապես ստեղծված են եղել «սառը պատերազմի» սպասարկման համար, պարբերաբար առճակատում են հրահրում:

Ընթացիկ տասնամյակի կեսին ամերիկյան իսթերլիշմենթի մի մասը, որը շահագրգորված չէ Եվրոպայի վերջնական կայացմանը եւ, համապատասխանաբար, հզորացմանը, կրկին սկսեց առաջ քաշել դաշինքի ընդլայնման գաղափարը՝ այժմ արդեն դեպի Ուկրաինա: Ամերիկյան հակահրթիռային պաշտպանության համակարգի տեղակայման պլանները պառակտեցին Յին աշխարհը: Մոսկվան համառորեն ընդդիմացավ:

Յուսով են, որ պատմական հեռանկարում Յարավ. Օսիայի վրա Թթիլիսիի հարձակումը եւ Ռուսաստանի պատասխանը ուսանելի դրվագ կլիմեն: Զոհերը՝ օսերը, ռուսները, վրացիները, կարող են ամենեին էլ գուր չլինել: Ռուսական զորքերը վճռական ռազմական հակահարված հասցրին ՆԱՏՕ-ի անվերջ ընդարձակման տրամաբանությանը, որը եթե չկանգնեցվեր, գործնականում անխուսափելիորեն կհանգեցներ մեծ պատերազմի: Եվ ոչ թե Վրաստանում, այլ Ուկրաինայի շուրջ՝ գորեթե Եվրոպայի կենտրոնում:

Եթե ԱՄՆ-ը եւ Արեւմտյան Եվրոպան փորձեն այսուհետեւ ընդարձակել ՆԱՏՕ-ն դեպի արեւելք, Ռուսաստանին ոչինչ չի մնա, քան ցանկապատի հետեւում թաքցված միջուկային հրթիռները բերել մարտական պատրաստության, պատրաստվել վատթարագույնին՝ փորձելով առավելագույն վնաս հասցնել մյուս կողմին: Գլոբալ խնդիրների լուծման համար համագործակցության մասին հարկ կլինի մոռանալ: Անհնարին կդառնա միջուկային դիմակայության մակարդակի եւ որեւէ լուրջ կրծատում:

Չեն կարծում, թե նավթային հորմոններից արկված մկանների մասամբ թուլացման պատճառով Ռուսաստանի մոտեցումն ավելի մեղմ կլինի: Թերեւս՝ հակառակը. կոշտ հակագելու պատրաստակամությունը կսաստկանա, առավել եւս, որ արտաքին սպառնալիքը ներքին խնդիրների պատեհ

հիմնավորում է: Քաղաքական եւ տնտեսական արդիականացման մասին հարկ կլինի մռանալ: Այնպես որ, նոր դիվանագիտությունը Եվրոպայի համար կլինի դրամա, աշխարհի համար եւս մեկ խնդիր, աղետ Ուկրաինայի եւ ողբերգություն ուս ժողովորդի համար:

Դարավոսական դրվագից հետո Միացյալ Նահանգներին եւ իր պատվիրատուներին չհաջողվեց սամձագերծել նոր, թեկուցել ծաղրանկարային «սառը պատերազմ»: Զցանկացան «հին»՝ մայրցանաքային Եվրոպացիները: Ապա համաշխարհային տնտեսական ճգնաժամը հերթական անգամ ընդգծեց նոր խնդիրների սրությունը, կրկին ցուց տվեց, թե որքան զավեշտալի են նախորդ ժամանակներից ժառանգված խառնակչություններն ու ին մտածողությունը:

### Փակել «Պանդորայի արկղը»

«Սառը պատերազմի» անավարտ լինելը ստեղծում է վտանգավոր վակուում: Եթե ՆԱՏՕ-ի ընդարձակման փորձերը շարունակվեն, գոյություն ունի Ռուսաստանը ռեւիզիոնիստական պետությունից (որը փոխում է 1990-ականներին իրեն պարտադրված աննապատ խաղի պայմանները) ռեւանշիստականի վերածվելու սպառնալիք: Ի զորու չինելով հաղթահարել իրենց քինախնդրությունն ու ազահությունը՝ Եվրոպացիները մի անգամ արդեն ննան սխալ կատարել են՝ Առաջին աշխարհամարտից հետո Գերմանիայի վզին փաթաթելով անարդար Վերսայան հաշտությունը: Այդ սխալի կրկնումը չի կարելի թույլ տալ:

Անհրաժեշտ է հավաքական անվտանգության մասին նոր համաեվրոպական պայմանագիր՝ ստորագրված կամ առանձին երկրների, կամ ՆԱՏՕ-ի, Եվրամիության, Ռուսաստանի եւ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության կողմից: Այդ պայմանագրին կարող են միանալ ներկայիս անվտանգության համակարգերում չընդգրկված երկրներ՝ ստանալով բազմակողմանի երաշխիքներ: ՆԱՏՕ-ի ընդարձակումը դե-ֆակտո սառեցվում է:

ԵԱՀԿ-ը վերածվում է Եվրոպայի հավաքական անվտանգության եւ համագործակցության կազմակերպության, ձեռք

բերում նոր, այդ թվում՝ ռազմաքաղաքական գործառույթներ ու գրկվում «սառը պատերազմ» գեներից: Ապագա պայմանագրում հարկավոր է հաստատել Հելսինկյան Եզրափակիչ ակտի՝ սահմանների անխախտելիության մասին դրույթը՝ կանխելու համար պետությունների հետագա մասնատումը կամ հակամարտությունների ուժային լուծման արդյունքում նրանց միավորումը: Կոստվոն, Յարավ. Օսիան եւ Արխազիան պետք է լինեն վերջին պետությունները, որոնք անջատվել են ուժային մերողների օգտագործմամբ: Յարկավոր է փակել այդ «Պանդրոյայի արկղը»՝ գոնե Եվրոպայում:

Եվրոպայի հավաքական անվտանգության եւ համագործակցության փաստաթուղթը պետք է լրացվի Ռուսաստանի ու Եվրամիության միավորնան մասին պայմանագրով՝ իհննված ընդհանուր տնտեսական եւ էներգետիկ տարածքի, միջազգային ասպարեզում քաղաքականության համակարգման դրույթների վրա:

Եվրամիության ու Ռուսաստանի հարաբերություններում, անշուշտ, առկա է աշխարհաքաղաքական գործոնը, հզոր է մրցակցության տարրը: Սակայն ԵՄ-ը, ի տարբերություն ՆԱՏՕ-ի, ստեղծվել է ոչ դիմակայության համար: Գլխավոր նպատակները, որոնք կանգնած են Եվրոպական ինտեգրման նախագծերի հետեւում, եղել են պատերազմների ժառանգության եւ պետական ազգայնականության հաղթահարումը, Եվրոպայի տնտեսական արդյունավետության ու բարեկեցության ամրապնդումը: Առճակատման ժառանգական կողի բացակայությամբ է բացատրվում, թե ինչու է Ռուսաստան–ԵՄ հարաբերությունների իհնքում ընկած համագործակցության ու մերձեցման հզոր ներուժ:

Յամաեվրոպական ճարտարապետությունը կարելի է լրացնել Չինաստան–Ռուսաստան–ԱՄՆ եռակողմ փոխգործակցությամբ՝ խոշորագույն համաշխարհային խնդիրներ լուծելու համար, որն առաջարկում են չին ազդեցիկ տեսաբանները: Յարկավոր է ընդլայնել Շանհայի համագործակցության կազմակերպությունը եւ նրա աշխատանքներին ներգրավել Միացյալ Նահանգներն ու ԵՄ-ը՝ թեպետեւ դիտորդի կարգավիճակով:

Առանձին ծառացած է համաշխարհային տնտեսության ու ֆինանսների կառավարման նոր համակարգի հարցը, որի

ստեղծումն, առանց նախորդ առձակատումներից ժառանգություն մնացած խնդիրների տակ գիծ անցկացնելու, ել ավելի դժվար կլինի:

Կարելի է ոչ քիչ այլ տարբերակներ մտածել: Թող որ նրանք առայժմ բարեհոգի երազանքներ թվան: Բայց եթե բանականորեն չորվեն ռազմավարական խնդիրներ, մենք դատապարտված ենք քարշ գալու իրադարձությունների (թերեւ՝ առավել ողբերգական) պոչից: Առաջ շարժվելու համար անհրաժեշտ է ավարտին հասցնել «անավարտ պատերազմը»:

**«Россия в глобальной политике»**

**№ 2, 2009**

**«Դանրապետական», 2009, թ. 6**

## ԵՍԱԿԵՆՏՐՈՆ ԱՇԽԱՐԴ

### Ոորերտ Կեյզան

Ոորերտ Կեյզան - ամերիկացի ճանաչված քաղաքագետ եւ հրապարակախոս, Քարմեզի հիմնադրամի ավագ աշխատակից, «Պատմության վերադարձն ու երազանքների վերջը» գրքի հեղինակ: Հոդվածը հրապարակվել է *Foreign Affairs* հանդեսում (թիվ 5, 2008թ.):

Մեր եսակենտրոն աշխարհում յուրաքանչյուր պետություն եւ ժողովուրդ միշտ իրեն հարց է տալիս. «Այս ամենից մեզ ի՞նչ օգուտ»: «Ահաբեկչության դեմ պատերազմի» հայեցակարգի անհամարժեքությունը բխում է այն իրողությունից, որ աշխարհում ամենեւին էլ ոչ շատ պետություններ են բաժանում Միացյալ Նահանգների այն կարծիքը, թե ահաբեկչությունը ժամանակի գլխավոր նարտահրավերն է: Ամերիկայի պայքարը մյուս երկրների կողմից զգնահատվեց որպես «ընդհանուր բարիք», որի համար իրենք պետք է նրան շնորհակալություն հայտնեն: Ընդհակառակը, երկրների մեծանասնությունը կարծում է, որ իրենք են ԱՄՆ-ին շնորհ անում՝ իրենց զորքերն ուղարկելով Աֆղանստան կամ Իրաք, քանզի հաճախ նրանց թվում է, թե դրանով իրենք զոհում են սեփական շահերը:

Անշուշտ, բոլոր արտաքին քաղաքական հայեցակարգերն, այսպես թե այնպես, անկատար են: Կոմունիստական վարչակարգերի զսպման հայեցակարգերը եւս իդեալական չեն, որովհետեւ 1947–1989թ. ժամանակահատվածում, կոմունիզմի եւ ժողովրդավարական կապիտալիզմի միջեւ պայքարից բացի, տեղի ունեցան շատ այլ կարեւոր իրադարձություններ: Եվ, այնուամենայնիվ, մյուս պետությունները հակակոնունիզմի հողի վրա հանախնբվեցին Միացյալ Նահանգների շուրջը՝ համաձայնվելով նրա առաջատարության հետ: Այն անհամենատ ավելի կարեւոր էր, քան ԱՄՆ իմիջը, որը բնավ ոչ միշտ է եղել անբասիր: Եթե Վիետնամի պատերազմը դաշնակիցների ճամբարում չհանգեցրեց նման պառակտնան, ինչպես Իրաքի

պատերազմը, ապա դա բոլորովին էլ այն պատճառով չէր, որ Լինդոն Զոնսոնի եւ Ռիչարդ Նիքսոնի Ամերիկան ավելի մեծ հարգանք էր վայելում, քան Զորջ Բուշի Ամերիկան: Բան այն է, որ այդ տարիներին Միացյալ Նահանգների գործողությունները համահունչ էին մյուս ժողովուրդների հիմնական ակնկալիքներին ու ձգումներին: Նախեւառաջ, ԱՄՆ-ը ապահովում էր շատ երկրների պաշտպանությունը Խորհրդային Միությունից, ուստի նրան ներեցին եւ Վիետնամի արկածախնդրությունը, եւ յուրօրինակ քաղաքական մշակույթը, երբ ընդամենը յոթ տարվա ընթացքում տեղի ունեցան Մարտին Լյութեր Քինգի ու Ռոբերտ Քենեդու սպանությունները, աֆրոամերիկացիների խռովությունն Ուորսում, ջարդը Քենեթի պետական հանալսարանում, ինչպես նաև Ուորերգեյը:

Ահաբեկչության դեմ պատերազմն այդպես էլ չհամախմբեց համաշխարհային ընկերակցությանը: Չինաստանն ու Ռուսաստանը հաճույքով սատարեցին նրան, քանզի այն Միացյալ Նահանգներին թույլ չէր տալիս ուշադրությունը սեւեռել այս երկու երկրներում մարդու իրավունքների զանգվածային խախտումների վրա: Բացի այդ, ահաբեկչության դեմ պատերազմը նրանց շահավետ էր, քանզի Մոսկվայի համար այն ենթադրվում էր չեչենների, իսկ Պեկինի համար՝ ույղուրների դեմ պատերազմը:

Եվրոպացիների համար իսլամական արմատականությունն, առաջին հերթին, ներքին խնդիր է: Նրանց ամենից շատ մտահոգում է, թե կկարողանան, արդյոք, մուսուլմաններն իրենց սովորույթներով եւ մշակույթով ներգրավել 21-րդ դարի Եվրոպական հասարակությանը, ու եթե այս, ապա ինչ ձեւով: Եվրոպացիները համարում են, որ Ամերիկան իր գործողություններով սուկ կրակին յուղ է լցնում: Ամերիկացիների կողմից փորփորված կրետարունը Եվրոպային չափազանց մոտ է, եւ դա չի կարող չանհանգստացնել Եվրոպացիներին:

Մի խոսքով՝ ահաբեկչության դեմ պատերազմն ավելի շուտ խոչընդոտներ է ստեղծում եւ դառնում հակասությունների աղբյուր, քան ծառայում միավորնան նպատակներին: Միացյալ Նահանգները, որն արդեն 1990-ական թվականներին շատերի կողմից ընդունվում էր որպես գերիշխան, ով մյուս երկրների նկատմամբ օգտագործում էր ահաբեկման մեթոդներ, սեպտեմ-

բերի 11-ից հետո նաեւ սկսեց ընկալվել որպես մի գերիշխան, որը կլանված է սեփական խնդիրներով եւ չի խորհում իր գործողությունների հետեւանքների մասին:

## Ուժ եւ պատրանք

Արդի աշխարհում Միացյալ Նահանգների վիճակն այնքան վատ չէ, ինչպես ընդունված է համարել: Այն կանխատեսումները, թե մյուս տերությունները կիամախմբվեն եւ կիակազդեն չկայացած գերտերությանը, չիրականացան: Մի շարք պետությունների հզորացումը չի հանգեցնի ԱՄՆ-ի դեմ միավորմանը: Չինաստանին ու Ռուսաստանին չի բավարարում Ամերիկայի համաշխարհային տիրապետության մասշտաբը, եւ նրանք շահագրգիռ են, որպեսզի իրենք առավել ազդեցություն ունենան համաշխարհային իրադարձությունների ընթացքի վրա: Ընդ որում, նրանք միմյանցից երկյուղուն են ոչ պակաս, քան Կաշինգտոնից: Մյուս հզորացող տերությունները, մասնավորապես՝ Բրազիլիան եւ Հնդկաստանը, չեն ծգտում դիմակայել Միացյալ Նահանգների ազդեցությանը:

Իրականում, չնայած հասարակական կարծիքի հարցման բացասական արդյունքներին, համաշխարհային առաջատարների մեջ նաև աշխարհաքաղաքական պլանում մերձենում է Միացյալ Նահանգների հետ: Արանից մի քանի տարի առաջ, ժակ Շիրակի եւ Գերիարդ Շրյոդերի ժամանակ, Ֆրանսիան ու Գերմանիան սիրաշահում էին Ռուսաստանին՝ փորձելով դրանով հավասարակշռել ԱՄՆ ազդեցությունն աշխարհում: Սակայն այժմ Ֆրանսիան, Գերմանիան ու Եվրոպայի մյուս երկրները հակվում են այլ որոշումների կայացման: Ոչ թե որպեսզի նրանք կրկին Միացյալ Նահանգների հանդեպ սիրով բռնկվեն: Պարզապես արտաքին քաղաքականությունում Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիի եւ Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի առավել ամերիկամետ դիրքորոշումն արտահայտում է նրանց կարծիքը, թե Միացյալ Նահանգների հետ մերձեցումը, թեեւ ոչ բոլոր բնագավառներում, միայն մեծացնելու է Եվրոպայի հզորությունը եւ ազդեցությունը: Միեւնույն ժամանակ, Արեւելյան Եվրոպայի երկրներն անհանգստացած են Ռուսաստանի

հզորության վերածնմամբ: Ասիայի ու Խաղաղօվկիանոսյան ավազանի պետությունները Միացյալ Նահանգների հետ գնացին մերձեցման հիմնականում Զինաստանի աճող հզորության հետ կապված մտահոգությունների պատճառով: 1990-ական թվականների կեսին ԱՄՆ եւ ճապոնիայի դաշինքը «ճաք տվեց», բայց սկսած 1997 թվականից՝ ռազմավարական հարաբերություններն ամրապնդվեցին: Հարավարեւելյան Ասիայի որոշ պետությունները նույնական սկսեցին հզորացող Զինաստանի կողմից հնարավոր ազրեսիայից ապահովագրվել: (Այս ընդհանուր միտումից կարելի է բացառություն համարել Ավստրալիան, քանզի նրա նոր կառավարությունն ավելի շատ ծգտում է դեպի Զինաստան եւ անհամեմատ ավելի քիչ՝ դեպի Միացյալ Նահանգներ):

Առավել նկատելի առաջընթաց տեղի ունեցավ Հնդկաստանի՝ Մոսկվայի նախկին դաշնակցի դիրքորոշման մեջ, որն այժմ ռազմավարական ու տնտեսական ավելի ընդարձակ նպատակների հասնելու համար ԱՄՆ-ի հետ լավ հարաբերությունները համարում է չափազանց կարեւոր:

Նույնիսկ Մերձավոր Արեւելքում, ուր հակաամերիկյան տրամադրություններն ավելի ուժեղ են, քան որեւէ այլ տեղ, իսկ Իրաքի օկուպացիայի եւ Արու-Գրեյք բանտի սարսափների մասին հիշողությունները շարունակում են բոցավառել ժողովրդական զանգվածներին, ուժերի ռազմավարական դասավորությունն ավելի շուտ Միացյալ Նահանգների օգտին է, քան դեմ: Եգիպտոսը, Չորդանանը, Մարոկոն ու Սաուդյան Արաբիան շարունակում են սերտ համագործակցել Վաշինգտոնի հետ, հավասարապես նաև Պարսից ծոցի երկրները, որոնք մտահոգված են Իրանի ճարտասանությունից եւ գործողություններից: Բաղրամը Սահամի ժամանակների անհաշտ հակաամերիկանիզմից անցել է ԱՄՆ-ից կախվածության, իսկ կայուն Իրաքը հաջորդ տարիներին ռազմավարական հավասարակշռությունը վճռականորեն տեղաշարժելու է Աներիկայի կողմը, քանզի տիրում է նավթի վիթխարի պաշարների եւ կարող է տարածաշրջանում կարեւոր դեր խաղալ:

Այս իրավիճակը շահեկանորեն տարբերվում է սառը պատերազմի ժամանակներից, երբ Մերձավոր Արեւելքում Միացյալ Նահանգներին ուղեկցում էին խոշոր ռազմավարական

անհաջողությունները: Անցյալ դարի 50-60-ական թվականներին արաբական աշխարհի ազգայնական շարժումը հաճակեց ողջ տարածաշրջանը եւ բացեց դրմերը Խորհրդային Միության անախաղեա ազդեցության համար՝ ներառյալ ԽՍՀՄ-ի ու Գամալ Աքբել Նասերի կողմից ղեկավարվող Եգիպտոսի, ինչպես նաև ԽՍՀՄ-ի ու Սիրիայի միջեւ թվացյալ դաշինքը: 1979-ին իրանական հեղափոխության (այաթոլա Խոմեյնիի առաջնորդությամբ) արդյունքում ամերիկանետ տրամադրված շահի արտաքսմամբ փլուզվեց ԱՄՆ ազդեցության կարեւոր հենասյունը տարածաշրջանում: Այն ռազմավարական հավասարակշռության մեջ առաջ բերեց արմատական տեղաշարժ, որը մինչ այժմ արտահայտվում է Ամերիկայի վրա: Իրաքի պատերազմը նման հետեւանքների չհանգեցրեց:

Նրանք, ովքեր այսօր խոսում են Միացյալ Նահանգների մայրամուտի մասին, հաճախ են գտնվում պատրանքների գերության մեջ՝ երեւակայելով, թե իբր անցյալում ողջ աշխարհը պարել է ամերիկան դուդուկի տակ: Շատերը կարոտախտով են համակված երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո ընկած փառահեղ ժամանակաշրջանի հանդեպ, երբ ԱՄՆ-ը գերիշխում էր ողջ աշխարհում: Նրանք մոռանում են, որ այն ժամանակ, հասնելով մեծ հաջողությունների Եվրոպայում ու ճապոնիայում, Միացյալ Նահանգներն աղետալի անհաջողություններ կրեց աշխարհի մյուս մասերում: Այդ «փառահեղ» ժամանակաշրջանում նա Չինաստանը «հանձնեց» կոմունիստներին, հանդուրժեց Հյուսիսային Կորեայի ներխուժումը Ճարավային Կորեա, բույլ տվեց Խորհրդային Միությանը փորձարկել ջրածնային ռումբը, չկանխեց հետզաղութային ազգայնականության բռնկումները Չնդկաչինում եւ այլն:

Այդ իրադարձություններից յուրաքանչյուրը վիթխարի մասշտարի ռազմավարական աղետ էր եւ այն ժամանակ հենց այդպես էլ ընկալվում էր: Դրանք պատուհասներ էին, որոնք 20-րդ դարի երկրորդ կեսին յուրովի ազդեցին համաշխարհային պատմության ընթացքի վրա, ընդ որում՝ ոչ լավագույն կողմով, եւ այդ դեպքերից յուրաքանչյուրում ԱՄՆ-ը ի զորու չէր լինում դրանք վերցնել հսկողության տակ: Վերջին տասնամյակի իրադարձություններից ոչ մեկը համեմատելի չէ այն ժամանակների

աշխարհաքաղաքական ձախողումների հետ, որոնք ամերիկյան դիրքերի թուլացման հետեւանք էին:

Չին ռազմավարները հավատում են, որ աշխարհում ուժերի ներկայիս դասավորությունը, թերեւս, նի որեւէ ժամանակ պահպանվի, եւ նրանք, հավանաբար, ծիշտ են: Այնքան ժամանակ, քանի դեռ Միացյալ Նահանգները համաշխարհային տնտեսության դեկին է, գերիշխում է ռազմական ոլորտում եւ հանդիսանում է ամենահանրաճանաչ քաղաքական փիլիսոփայության գլխավոր առաջալը, այնքան ժամանակ, քանի դեռ ամերիկյան հասարակությունը շարունակում է հանդես գալ Ամերիկայի գերիշխող դիրքի օգտին, ինչպիսին նա վեց տասնամյակ անփոփոխ մնացել է, վերջապես՝ այնքան ժամանակ, քանի դեռ ԱՄՆ հավանական ախոյաններն իրենց հարեւաններին ավելի շատ վախ են ներշնչում, քան համակրանք, ձեւավորված միջազգային համակարգը կանգուն կմնա: Աշխարհում նաև կիրար պես կպահպանվի մեկ գերտերություն՝ մի քանի մեծ տերությունների առկայությամբ:

Եվս մեկ պատրանքն այն է, որ Ամերիկան կարող է իրեն վերադարձնել համաշխարհային առաջատարությունը եւ վերականգնել դաշնակիցների հետ այն համագործակցությունը, որը հատուկ էր սառը պատերազմի դարաշրջանին: Արեւմտյան դաշնակիցներին այլեւս չի միավորում այնպիսի սպառնալիքը, ինչպիսին Խորհրդային Միության գոյությունն էր, որը Միացյալ Նահանգներին եւ մյուս պետություններին ստիպում էր համախմբել շարքերը: Ներկայիս աշխարհն ավելի շատ հիշեցնում է 19-րդ հարյուրամյակը, քան 20-րդ դարի վերջը: Նրանք, ովքեր դա լավ նորություն են համարում, պետք է հիշեն, որ 19-րդ հարյուրամյակն այնպես բարեհաջող չավարտվեց, ինչպես սառը պատերազմի դարաշրջանը:

Մեր եսասիրական աշխարհում ոչ բոլոր երկրներն են կարող իրենց ողջամտություն թույլատրել: Բայց եթե որեւէ հույս դեռ մնացել է, ապա դա առանձին պետությունների կողմից ընդհանուր արժեքների վերիմաստավորնան հույսն է: ԱՄՆ-ը եւ մյուս ժողովրդավարական երկրները կիսում են ընդհանուր ձգտումը ազատական համաշխարհային կարգին՝ հիմնված ժողովրդավարական սկզբունքների, միջազգային իրավունքի եւ

համաձայնագրերի վրա, որքան էլ որ նրանք անկատար լինեն: Որոշ ավտորիտար պետությունների ազդեցության ու հզորության մեծացման, ինչպես նաև արմատական իւլանական ահարեկչության հակաժողովրդավարական հարձակումների պատճառով՝ այդ կարգը հայտնվում է սպառնալիքի տակ: Որքան նվազ ակնհայտ է ժողովրդավարությունների կարիքը միմյանց նկատմամբ, ինչպես նախկինում էր, այնքան ավելի հաստատուն կերպով է առաջին պլան մղվում այդ երկրների (ներառյալ՝ Միացյալ Նահանգները՝ «ապագայի վրա սեւեռվելու» անհրաժեշտությունը:

«Դանրապետական», 2009, թ. 1

## ԱՆԳԵՏԱԶԳԵԼԻ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐ Զքիգնել Բժնդիշնելի

Միացյալ Նահանգների նախագահ Բարաք Օբամայի արտաքին քաղաքականությունը կարելի է դիտարկել երկու տեսանկյունից: Մի կողմից՝ գնահատել նպատակներն ու որոշումների ընդունման համակարգը, մյուս կողմից՝ գործնական մոտեցումները եւ դրանց իրագործումը:

Ի պատիվ Օբամայի՝ պետք է նշել, որ նա հիրավի տիտանական ջանքեր գործադրեց, որպեսզի փոխի արտաքին աշխարհի նկատմամբ ԱՄՆ վերաբերմունքն ու երկիրն առավել համաչափորեն ներգրավի 21-րդ դարի ձեւավորվող պատմական համատեքստում: Մեկ տարուց էլ պակաս ժամանակահատվածում նախագահը լիովին վերանայեց մի քանի կարեւոր աշխարհաքաղաքական հարցերի վերաբերյալ ամերիկյան արտաքին քաղաքականության հայեցակարգը.

- իսլամը թշնամի չէ, եւ Միացյալ Նահանգների ներկայիս դերն աշխարհում չի բնորոշվում «ահաբեկչության դեմ գլոբալ պատերազմով»,
- Խսրայելի ու Պաղեստինի միջեւ հարատեւ խաղաղության հասնելու գործում ԱՄՆ-ը խաղալու է արդար եւ հաստատական միջնորդի դեր,
- Վաշինգտոնին հարկավոր է իրանի հետ վարել լուրջ բանակցություններ՝ նրա միջուկային ծրագրի, ինչպես նաև այլ հարցերի շուրջ,
- «Թալիբան» շարժման վերահսկողության տակ գտնվող Աֆղանստանի գավառներում ապստամբական շարժման դեմ պայքարը պետք է լինի առավելապես քաղաքական, այլ ոչ ռազմական,
- Միացյալ Նահանգները պետք է հարգի լատինաամերիկյան երկրների նրբանկատությունը մշակութային ինքնության եւ պատմական անցյալի նկատմամբ, ինչպես նաև ընդլայնի շփումները Կուբայի հետ,
- ԱՄՆ-ը պետք է առավել եռանդուն ջանքեր գործադրի սեփական միջուկային գինանոցի կրծատման համար եւ

շարժվի դեպի գլխավոր նպատակը՝ աշխարհը միջուկային գենքից լիովին ազատագրելը,

- գլոբալ խնդիրների լուծման ժամանակ հարկավոր է Չինաստանին վերաբերվել ոչ միայն որպես տնտեսական, այլև որպես աշխարհաքաղաքական գործընկերոց,
- ամերիկա-ռուսական հարաբերությունների բարելավումը համապատասխանում է Երկու կողմերի շահերին, սակայն, միաժամանակ, պետք է ընդունել այն աշխարհաքաղաքական իրողությունը, որ ձեւավորվել է «սառը պատերազմի» ավարտից հետո, այլ ոչ թե փորձել վերափոխել այն,
- անհրաժեշտ է անդրատլանտյան միասնական գործընկերային հարաբերություններին տալ առավել լուրջ նշանակություն, մասնավորապես, անհամաձայնություններն ու «ճեղքվածքները» փոխհարաբերություններում հաղթահարելու համար, որոնք առաջացել են վերջին մի քանի տարիների ապակառուցողական դիմակայության պատճառով:

Դեռևս շատ վաղ է նախագահի՝ իր առաջնայնություններին հետեւելու վճռականությանը միանշանակ գնահատական տալ, քանզի լուրջ թեմաների մեջ մասը ներառում է Երկարաժամկետ խնդիրներ, որոնք պահանջում են տեւական ջանքեր: Սակայն կան անհետաձգելի հարցեր, որոնք արդեն նոտակա հեռանկարում լինելու են նրա ընդունակության ու վճռականության դժվարին փորձություն. իսրայելա-պաղեստինյան հակամարտությունը, իրանի միջուկային հավակնությունները եւ աֆղանա-պակիստանյան մարտահրավերը:

### Իսրայելա-պաղեստինյան գլուխկոտրուկ

Առաջին անհետաձգելի մարտահրավերն, անշուշտ, խաղաղության գործընթացն է Մերձավոր Արեւելքում: Իսրայելա-պաղեստինյան հակամարտության կաթվածահարությունը չափից ավելի ձգձգվեց, ու եթե միջոցներ չձեռնարկվեն, այն կարող է կործանարար հետեւանքներ ունենալ թե պաղեստինցիների, թե՝

ողջ տարածաշրջանի, թե՛ Միացյալ Նահանգների համար եւ, վերջին հաշվով, վճասել իսրայելին: Այդ մասին մոդայիկ չէ խոսել, սակայն կասկած չի հարուցում այն փաստը, որ, արժանիորեն կամ անարժանորեն, ԱՄՆ-ի հանդեպ թշնամական վերաբերմունքը Սերծավոր Արեւելքում եւ, առհասարակ, մուսուլմանական աշխարհում, մեծ մասամբ, բացատրվում է այդ ձգձգված հակամարտության հետեւանքով առաջացած արյունահեղությամբ եւ արար բնակչությանը պատճառված տառապանքներով: Բեն Լադենի կողմից սեպտեմբերի 11-ի ահարեւէզության արդարացումը հիշեցնում է, որ Միացյալ Նահանգներն ինքը իսրայելապաղեստինյան գլուխկոտրուկի գոհ է հանդիսանում

Այսօր, Արեւմտյան ափի ավելի քան 40-ամյա իսրայելական բռնազավթումից եւ 30-ամյա խաղաղ բանակցություններից հետո, միանգամայն ակնհայտ է, որ ոչ իսրայելցիները, ոչ պաղեստինցիներն ի վիճակի չեն ինքնուրույն լուծել այս կոնֆլիկտը: Կան դրա բազում բացատրություններ, սակայն գլխավոր պատճառն այն է, որ պաղեստինցիները չափից ավելի անջատ են եւ թույլ, որպեսզի կայացնեն խաղաղության գործնթացի առաջխաղացման համար անհրաժեշտ կարեւոր որոշումներ, իսկ իսրայելցիները չափից ավելի անջատ են եւ ուժեղ, որպեսզի առաջադիմեն այս հարցում: Ահա թե ինչու է հարկավոր վճռական արտաքին նախաձեռնություն, որը կսահմանի վերջնական կարգավորման հիմնարար բնութագրիչները, ինչը թույլ կտա երկու կողմներին անհապաղ սկսել լուրջ բանակցություններ, եւ այդ նախաձեռնությունը կարող է ելնել միայն ԱՄՆ-ից:

Սակայն անհրաժեշտ արտաքին ազդակը, որը կիամապատասխանի ամերիկացիների շահերին եւ հնարավորություններին, դեռևս չի տրվել: 2009թ. գարնանը բարձրացնելով բնակավայրերի հարցը, իսկ այնուհետեւ իսրայելյան կառավարության կողմից հակահարված ստանալով ու նահանջելով՝ Սպիտակ տան վարչակազմն ամրապնդեց կոշտ գծի կողմնակիցների դիրքերն իսրայելում եւ թուլացրեց այն պաղեստինցիներին, որոնք առավել մեղմ գծի հետեւորդ են: Ավելի ուշ, ՄԱԿ գլխավոր վեհաժողովի ամենամյա նստաշրջանում, բաց թողնվեց Միացյալ Նահանգների տեսակետը միջազգային

հասարակական կարծիքի հետ համաձայնեցնելու հնարավորությունը: Օքանան, հնարավորությունից օգտվելու փոխարեն, պարզապես խրայելցիներին ու պաղեստինցիներին կոչ արեց բանակցությունները վարել բարի մտադրություններով:

Գոյություն ունեցող համաշխարհային կոնսենսուսը կարող է ցատկահարթակ ծառայել օրակարգի չորս հիմնարար կետերի շուրջ բանակցությունների համար:

**Առաջին** պետք չէ պաղեստինցի փախստականներին ներկայիս խրայելի տարածք վերադառնալու իրավունք տալ, քանզի չի կարելի սպասել, թե Խրայելը հանուն խաղաղության ինքնասպանություն կգործի: Փախստականները պետք է վերաբնակեցվեն պաղեստինյան պետությունում՝ ստանալով փոխահատուցում ու, թերեւս, կարեկցանք՝ կրած տառապանքների համար: Պաղեստինի ազգային ազատագրության շարժմանը դժվար կլինի սրա հետ հաշտվել, բայց այլ ելք չկա:

**Երկրորդ** Երուսաղեմը հարկավոր է բաժանել, եւ բաժանել արդարացիորեն: Խրայելի մայրաքաղաքն, անշուշտ, մնալու է Արեւմտյան Երուսաղեմում, իսկ Արեւելյան Երուսաղեմը կդառնա պաղեստինյան պետության մայրաքաղաքը: Ինչ վերաբերում է Յին քաղաքին, ապա բաժանումը կլինի ըստ միջազգային համաձայնագրի: Եթե Երուսաղեմի հարցում արդարացի փոխազդումը չլինի կարգավորման բաղկացուցիչ մաս, ապա պաղեստինցիները ողջ Արեւմտյան ափի տարածքում կշարունակեն վրդովմունք արտահայտել եւ կիրաժարվեն խաղաղ գործընթացից: Թեպես խրայելցիներին դժվար կլինի նման բնույթի փոխզիջման գնալ, սակայն առանց դրա հաշտության նասին խոսք լինել չի կարող:

**Երրորդ** կարգավորումը պետք է հիմնվի 1967թ. սահմանազատման գծի վրա, սակայն տարածքների փոխանակման պայմանով, որ մեծ բնակավայրերը միացվեն Խրայելին ու դադարեցվի պաղեստինյան պետության տարածքի հետագա կրծատումը: Ընդ որում, Խրայելին հարկ է լինելու Պաղեստինի տարածքի կորուստը փոխահատուցել խրայելական հյուսիսային եւ հարավային հողերի հաշվին, որոնք սահմանակից են Արեւմտյան ափին: Կարեւոր է հիշել, որ թեւ ըստ 1967թ. սահմանազատման՝ խրայելցիներն ու պաղեստինցիները քանակական հարաբե-

րությանք գրեթե հավասար են, պաղեստինյան տարածքը կազմում է նախկին բրիտանական մանդատի սուկ 22 տոկոսը, մինչդեռ իսրայելականը 78 տոկոս է:

**Զորորորդ.** ԱՄՆ-ը կամ ՆԱՏՕ-ն պարտավոր է իր վրա վերցնել Հորդանան գետի երկայնքով զորքերի տեղակայումը: Նման որոշումն իսրայելի անվտանգությանը կիալորդի ռազմավարական խորություն եւ կնվազեցնի նրա մտավախությունը, թե անկախ Պաղեստինը երբեւից կարող է արարների համար իսրայելի վրա հարձակման պլանդարմ ծառայել:

Եթե Օբաման ՍԱԿ Գլխավոր Վեհաժողովի սեպտեմբերյան նստաշրջանում ընդուներ ողջ աշխարհի կողմից հավանության արժանացած այս ծրագիրը, ապա վիթխարի ազդեցություն կգործեր իսրայելցիների ու պաղեստինցիների վրա եւ անմիջապես կապահովեր միջազգային ընկերակցության աջակցությունը: Սույն ծրագրի մերժումը բաց թողնված հնարավորություն է, հատկապես այն պատճառով, որ երկու պետությունների մասնակցությամբ կայացած որոշումը՝ որպես իսրայելցիների եւ պաղեստինցիների միջեւ ու տարածաշրջանի ներսում հաշտեցման կենսունակ բանաձեւ, սկսում է կորցնել գրավչությունը: Առավել եւս, կան բոլոր տվյալները, որ Միացյալ Նահանգները կորցնում է արարական աշխարհի բարեհաճությունն ու վստահությունը, որոնք Օբաման իր հունիսյան ճառով ձեռք էր բերել Կահիրենում:

Հավանաբար, պաղեստինցիներին սփոփելու կամ, թերեւս, իր վճռականությունը հաստատելու համար՝ Օբաման ՍԱԿ Գլխավոր Վեհաժողովում արտասանած ճառում կոչ արեց սկսել կարգավիճակի շուրջ բանակցությունները եւ պարզորոշ հասկացրեց, որ բանակցությունների վերջնական նպատակը «կենսունակ, անկախ, հստակ սահմաններով պաղեստինյան պետության» ստեղծումն է, «որը վերջ կտա 1967թ. սկսած բռնազավթմանը»:

### **Իրանական մարտահրավեր**

Եվս մեկ անհետաձգելի ու խիստ վտանգավոր մարտահրավեր է նետված Օբամային իրանի կողմից, եւ շատ բան կախված է լինելու դրան համարժեք պատասխանելու նրա

ունակությունից: Խոսքն իրանական միջուկային ծրագրի իրական բնույթի եւ տարածաշրջանում թեհրանի դերի մասին է: Օբանան մտադիր է ուշադրությամբ ուսումնասիրել իրանի հետ լուրջ բանակցություններ վարելու հնարավորությունը՝ չնայած ներքին (եւ մասամբ արտասահմանյան) քարոզչությանը եւ անգամ սեփական թիմի երկրորդ էշելոնի որոշակի հակազդեցությանը: Այդ մասին չբարձրածայմելով՝ նա հասկացրեց, որ խնդրի ռազմական լուծումն ամենաքիչ ընդունելի տարբերակն է, թեև, ինչպես դեռ մոդայիկ է ասել, «ոչ մի տարբերակ առայժմ չեղյալ չի հայտարարված»: Միաժամանակ, հաջող բանակցությունների հեռանկարները չնշին են:

Երկու առանցքային հարց բարդացնում է իրավիճակը:

**Առաջին.** ցանկանո՞ւմ են, արդյոք, իրանցիներն առհասարակ երկխոսության մեջ մտնել եւ ընդունա՞կ են նրանք բանակցություններում լինել լուրջ եւ հուսալի գործընկեր: ԱՄՆ-ը պետք է իրատեսորեն մոտենա այս տեսակետի քննարկմանը, քանզի ժամանակը հետ պտտել անհնարին է. իրանցիներն ունեն ուրանի հարստացման հնարավորություն, եւ նրանք չեն պատրաստվում դրանից օգտվելուց հրաժարվել: Առավել խիստ տեսչական ռեժիմի կիրառման ճանապարհով, հավանաբար, հաջողվի թույլ չտալ Իրանին ստանալու մարտական ուրան կամ պլուտոնիում: Այնուհանդերձ, եթե նույնիսկ Միացյալ Նահանգներն ու նրա գործընկերները կառուցողական մոտենան բանակցություններին, իրանցիներն իրենք կարող են տապալել դրական արդյունքի հասնելու ցանկացած լուրջ հեռանկար: Արդեն բանակցությունների գործընթացի սկզբից եւեր Իրանի հանդեպ վստահությունը խախտվեց, ինչը դժվարացրեց խոսուումնալից փոխարժեած ծեղբերումը Ուսւաստանի եւ Ֆրանսիայի մասնակցությամբ, որոնք իրանական հարստացված ուրանի մշակման հարցում ծառայություններ էին առաջարկել:

**Երկրորդ.** պատրա՞ստ է, արդյոք, Վաշինգտոնը համբերությամբ վարել բանակցությունները՝ «զեղը անելով» մյուս կողմի հոգենտածելակերպին: Կարո՞ղ են բանակցությունները հաջողությամբ պսակվել, եթե ԱՄՆ-ը այսուհետեւ էլ իրապարակայնորեն Իրանի վրա կախի ահաբեկչական պետության պիտակը, որին չի կարելի վստահել, որի դեմ անհրաժեշտ է

պատժամիջոցներ կիրառել կամ անգամ ռազմական գործողություն նախապատրաստել: Նման նարտավարությունը ձեռնտու կլինի ամենամոլեռանդ իրանական «բազեներին» եւ ազգայնականությունը հրապուրիչ կդարձնի բնակչության լայն շերտերի համար, ինչպես նաև որեւէ ձեւով կհարթեցնի վերջերս նկատված պառակտումը առավել ազատական կարգի կողմնակիցների եւ մոլեռանդական տիրապետությունը հավերժացնել ցանկացողների շարքերում:

Այս պահերը պետք է նկատի ունենալ, եթե լրացուցիչ պատժամիջոցներն անհրաժեշտ լինեն: Դարկավոր է հոգ տանել, որ պատժամիջոցները լինեն քաղաքականապես խելամիտ եւ մեկուսացնեն վարչակարգը, որպեսզի չհանախնի իրանցի բնակչությանը: Այդ միջոցները պետք է իբրեւ պատիժ հանդիսանան իշխանությունում գտնվողների, բայց ոչ իրանական միջին խավի համար: Չնտածված եւ նվաստացուցիչ պատժամիջոցների կիրառման անցանկալի արդյունքը կարող է լինել հասարակ իրանցիների մոտ այն տպավորության ստեղծումը, թե Միացյալ Նահանգների նպատակն է՝ Թերանին թույլ չտալ իրագործել խաղաղ ատոմի ծրագիրը: Դա, առանց որեւէ կասկածի, կսանձագերծի ազգայնականությունը եւ ատելություն կառաջացնի Իրանում:

Ավելին, նույնիսկ քաղաքականորեն իիմնավորված պատժամիջոցների ընդունումն, ամենայն հավանականությամբ, կդժվարանա այլ երկրների հակազդեցության պատճառով: Չինաստանը, հաշվի առնելով նրա կախվածությունը մերձավորարեւելուն եւ, հատկապես, իրանական նավթից, երկյուղում է սրացող ճգնաժամի հետեւանքներից: Ռուսաստանի դիրքորոշումը երկիմաստ է, քանզի լինելով Եվրոպա էներգակիրների խոշորագույն մատակարարը, նա կարող է շահագրգիռ լինել Պարսից ծոցի տեւական ճգնաժամով, որը կբարդացնի իրանական նավթի մուտքը Եվրոպական շուկա: Բացի այդ, ռուսական աշխարհաքաղաքականության տեսանկյունից, Պարսից ծոցի հակամարտության հետեւանքով նավթի գնի կտրուկ աճը կիարվածի ԱՍՍ-ի ու Չինաստանի տնտեսությանը՝ երկրներ, որոնց գերակայությունն աշխարհում Մոսկվայի մոտ անգամ

սարսափ է առաջացնում, իսկ Եվրոպան կարող է ել ավելի կախված լինել ռուսական ենթագիրների մատակարարումներից:

Վերջնադրյունքում՝ խաղատախտակին դրված է անհամեմատ ավելի կարեւոր ռազմավարական խնդիր. պետք է, արդյոք, Միացյալ Նահանգները Իրանը Մերձավոր Արեւելքում կայունացնող ուժի վերածելու երկարաժամկետ նպատակ դնի: Այն կարելի է առավել պարզ եւ սուր ձեւակերպել. պետք է, արդյոք, ԱՄՆ-ը խրախուսի Իրանին, որ այն կրկին դառնա իր կամ նույնիսկ Խսրայելի գործընկերը: Չէ՞ որ Իրանը երեք տասնամյակ իրոք եղել է Խսրայելի գործընկերը: Որքան ընդարձակ է օրակարգը՝ ընդգրկելով տարածաշրջանային անվտանգության, հնարավոր տնտեսական համագործակցության եւ այլ հարցեր, այնքան բարձր է ընդունելի փոխազիջումներ գտնելու հավանականությունը: Կամ, միգուցե, Թեհրանին հարկավոր է վերաբերվել այնպես, ինչպես երկրի, որն առանց այդ էլ խիստ անհանգիստ տարածաշրջանում այսուհետեւ էլ դատապարտված է մնալու որպես թշնամական եւ ապակյառնացնող ուժ:

Առավել կոշտ մոտեցման կողմնակիցները պետք է հիշեն, որ Միացյալ Նահանգները զգալու է Իրանի վրա հարձակման ցավագին հետեւանքները, անկախ նրանից, թե ով է սկսելու ռազմական գործողությունը՝ ԱՄՆ-ը, թե Խսրայելը: Անենայն հավանականությամբ, Թեհրանն իրեն թիրախ է ընտրելու Աֆղանստանի ու Իրաքի ամերիկյան զորքերը, եւ նա ընդունակ է ապակյունացնել դրությունը երկու երկրներում: Յորմուզի ներուցը կարող է վերածվել մարտական գործողությունների այրվող գոտու, եւ աներիկացիներին կրկին հարկ է լինելու ավտոլիցքավորումների վրա խելահեղ գներ վճարել: Իրանը հենց այն խնդիրն է, որի դեպքում Օբաման պետք է վստահի իր առաջնորդական հնտություններին եւ թույլ չտա, որպեսզի իրեն կառավարեն: Մինչ այժմ դա նրան հաջողվել է:

## Աֆղանա-պակիստանյան ճահիճ

Երրորդ անհետաձգելի եւ նույր արտաքին քաղաքական խնդիրը փակուղային իրավիճակն է Աֆղանստանում ու Պակիստանում: Օբաման իր մեջ ուժ է գտել իրաժարվելու առավել

փառասիրական եւ անգամ գաղափարախոսական նպատակ-ներից, որոնք Վաշինգտոնն իր առջեւ դրել էր աֆղանական կամպանիայի սկզբին (օրինակ՝ այնտեղ ժամանակակից ժողովրդավարության ստեղծումը): Սակայն Միացյալ Նահանգները պետք է աֆղանա-պակիստանյան կամպանիայի անցկացման ժամանակ, ուր նախկինի պես գերակշռում է ռազմական տարրը, բարձր զգուշավորություն դրսեւորի: Հակառակ դեպքում՝ աֆղաններն ու պակիստանցիներն այդ ներխուժումը կընկալեն իբրեւ արեւմտյան գաղութային քաղաքականության հերթական դրսեւորում եւ դրան ավելի ռազմաշունչ կերպով կիակադարձեն:

Անհրաժեշտ է իրականացնել շտապ ռազմավարական վերագնահատում: Սակայն ոչ մի նոր ռազմավարություն հաջող չի լինի, եթե այնտեղ բացակայի երկու կարեւոր տարր:

*Առաջին* աֆղանական կառավարությանը եւ ՆԱՏՕ-ին հարկավոր է ջանքեր գործադրել՝ համաձայնության հասնելու «Թալիբան» շարժման հետ: Թալիբները համաշխարհային հեղափոխական կամ ահարեկչական շարժում չեն, եւ նրանք Արեւմուտքին անմիջական սպառնալիք չեն ներկայացնում, թեեւ հետեւում են աֆղան հասարակության կառուցվածքի մասին միջնադարյան գաղափարների: Ավելին, «Թալիբան» շարժումը մինչ այժմ Աֆղանստանում մնում է փոքրամասնություն, որը վերջնարդյունքում կարող է պարտության մատնվել միայն մյուս աֆղանների կողմից (թեեւ դաշնակիցների օգնությամբ): Ընդ որում, ավելի շուտ անհրաժեշտ է քաղաքական, քան ռազմական ռազմավարություն:

*Երկրորդ*. Միացյալ Նահանգները պետք է մտածի՝ ինչպես ապահովել Պակիստանի աջակցությունը: Դրա համար հարկավոր է ոչ միայն թալիբներին որևս մնել Պակիստանից՝ չթողնելով նրանց այդ երկրում իրենց հարմարավետ զգալու հնարավորություն, այլեւ ճնշում գործադրել Աֆղանստանի թալիբների վրա, որպեսզի նրանց առաջնորդները գնան համաձայնագրի ստորագրման: Հաշվի առնելով, որ շատ պակիստանցիներ կարող են թալիբների հսկողության տակ գտնվող Աֆղանստանը գերադասել Պակիստանի գլխավոր թշնամուն՝ Հնդկաստանին հարող աշխարհիկ Աֆղանստանից, ԱՄՆ-ը պետք է հանգստացնի հսկամաբադին, որպեսզի

«Թալիբան» շարժման անհաշտ տարրերի դեմ պայքարում ստանա Պակիստանի ղեկավարության անվերապահ աջակցությունը: Այդ ինաստով, պետք կլինի Շինաստանի օգնությունը՝ հաշվի առնելով տարածաշրջանային կայունության ապահովման գործում նրա աշխարհաքաղաքական շահը եւ Իսլամաբադի հետ ավանդական սերտ կապերը:

Միացյալ Նահանգների գլոբալ դերը տեսանելի ապագայում կախված կլինի նրանից, թե Օքամային որքանով կհաջողվի գլուխ հանել այս երեք անհետաձգելի ու փոխկապակցված խնդիրներից: Եթե Սերծավոր Արեւելքի խաղաղության գործընթացը տապալվի, իրանի դեմ կսանձագերծվի ռազմական կանաչնիա, իսկ մարտական գործողությունների հաճախականությունն Աֆղանստանում ու Պակիստանում կսկսի աճել. եւ այս ամենը տեղի կունենա միաժամանակ: Այս պարագայում ԱՄՆ-ը երկար տարիներ դատապարտված կլինի վիթխարի եւ անկանխատեսելի տարածաշրջանում միայնակ դիմակայել իր համար կործանարար հականարտությանը, ինչը կարող է վերջ դնել ամերիկյան գերիշխանությանն աշխարհում:

(հոդվածը գրվել է մինչ Օքամային Օսլոյում խաղաղության Նորեյան մրցանակի համձնման արարողությունը.—Խմբ.)

## «Россия в глобальной политике»

№ 1, 2010

«Դամրապետական», 2010, թ. 3

## ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԵՌԼԱԴԻՋԱ ԴՐՈՌԻԺԵՆՏԱ

ՀԵՌԼԱԴԻՋԱ ԴՐՈՌԻԺԵՆՏԱ – ՌՈՒՍԱՍՏԱՆԻ գիտությունների ակադեմիայի սոցիոլոգիայի ինստիտուտի ազգամիջյան հարաբերությունների հետազոտական կենտրոնի ղեկավար:

### Ազգայնականության ընկալման բանալիները

Ազգայնականությունը սահմանում են որպես գաղափարախոսություն, համաձայն որի, ազգի՝ որպես խմբի, շահերն ու արժեքները գերակայում են մյուս շահերից ու արժեքներից:

Գրականությունում եւ քաղաքական պրակտիկայում ընդունված է առանձնացնել քաղաքացիական կամ, ինչպես այն կոչել է հայտնի պատմաբան Յանս Կոնը, արեւմտյան ազգայնականությունը՝ Ֆրանսիայի ու Մեծ Բրիտանիայի մոդելով։ Նրան անվանում են նաեւ ռացիոնալ՝ հիմնված պետության հանդեպ հավատարմության, անձի ազատ ինքնորոշման վրա։ Նենց այս հարթության մեջ է ընկած ազգի ամերիկյան ընկալունը։

Երկրորդ տարբերակը էրնոնշակութային կամ էրնիկ ազգայնականությունն է։ Այն համարում են իռացիոնալ, քանզի նա ապավիճում է «արյան կանչին», «ընդհանուր պատմությանը» եւ հիմնված է ժողովրդին հավատարիմ լինելու վրա, որն ունի որոշակի մշակութային բազա։ Նման մոդելն ընդունված է անվանել «գերմանական»։ Իենց նրան են բոլորից մոտ ազգի եւ ազգայնականության նաև առաջարկությունները։

Ազգայնականության ֆենոմենը նման է այսբերգի։ սոսկ վերնամասն է գտնվում մակերեւութին, իսկ մեծ մասը բաքնված է անմիջական հսկողությունից։ Կախված սոցիալ-քաղաքական համատեքստից, ստորջրյա նաև բարձրանում է ջրի երեւմերկացնելով իր կլոր կամ սուր եզրերը։

Ազգայնականության ընկալման համար որոշիչ նշանակություն ունի առնվազն երեք տեսական-մեթոդաբանական սկզբունք, որոնք ապացուցել են իրենց արդյունավետությունը։

**Առաջին**. հարկավոր է ազգայնականությունը դիտարկել պատմական հեռանկարում՝ հասկանալով նրա տիպերի տարբերությունները (օրինակ՝ 18-րդ դարի եւ առողի ժամանակաշրջանի) եւ ըմբռնելով այն փաստը, որ յուրաքանչյուր կոնկրետ ազգայնականություն ընդունակ է փոխակերպման: Հանս Կոնը հաջողությամբ ներկայացրեց նման մոտեցումը՝ հետագուտելով Եվրոպան: Նրան է պատկանում այն հետեւությունը, թե ազգայնականության պատմություն՝ դա ռացիոնալ սկզբի մշտական այլասերումն է խելահեղության, որն առավել վառ դրսեւորվեց նացիոնալ-սոցիալիզմում՝ իր պատերազմներով, բռնությամբ, մեսիական ավտորիտարիզմով:

**Երկրորդ**. այդ նույն Կոնը Եվրոպային վերաբերող նյութում ցույց տվեց, թե ազգայնականության վերլուծության համար որքան կարեւոր է մշակույթների համեմատության սկզբունքը: Արժե համեմատել ազգի մասին վերջին երկու հարյուրամյակում ձեւավորված պատկերացումները.

ա) «Փրամսիական», որը ելնում է պետության քաղաքացիների ազատ ընկերակցության գաղափարներից՝ հիմնված քաղաքական ընտրության վրա եւ

բ) «գերմանական»՝ հիմնված մշակույթի եւ ընդհանուր ծագման վրա:

Սակայն, նաեւ այս վաղուց ստեղծված ձեւերը քարացած չեն: Էնթոնի Սմիթը, ավելի գլորալ դիտարկելով ազգայնականության երեւույթը, քան Եվրոպանետ Կոնը, հրաժարվեց կտրուկ հակառակ «արեւմտյան» (քաղաքացիական) ազգայնականությունը՝ «արեւելյանին» (էքնոմշակութայինին): Վերջին հաշվով, երկու մողելներն էլ ունեն ինչպես մշակութային, այնպես էլ տարածքային հենք:

**Երրորդ**. նույնիսկ այն ուսումնասիրողները, որոնք բացահայտորեն կանգնած են կոնստրուկտիվիստական դիրքերում, ընդունում են (ինչպես, օրինակ՝ Ուն Սունին) համատեքստի կարեւորությունը: Ազգայնականությունը առավել մեծ հաջողությունների հասավ այնտեղ, ուր դրան նախորդել էր որոշակի տարածքային, լեզվական կամ մշակութային ընդհանրության, ընդհանուր պատմական հիշողության առկայությունը, որն օգտագործվում է որպես սկզբնանյութ ինտելեկտուալ ազգայ-

նականության նախագծի համար: Շոտլանդական, բասկյան, էստոնական, լիտվական ազգայնականությունների փորձը հաստատում է այս հետեւությունը:

## Ազգայնականության տիպերը

Ուսումնասիրելով խորհրդային եւ հետխորհրդային տարածքում ազգամիջյան հարաբերությունները՝ մենք առանձնացրել ենք ազգայնականության վեց տիպ:

**Դասական ազգայնականություն** պետք է համարել այն, երբ մշակութային բոլոր հիմնավորումները (պետական լեզվի անհրաժեշտություն, սեփական նորմատիվային, գեղարվեստական մշակույթի պահպանում), պատմական, աշխարհաքաղաքական, տնտեսական փաստարկները ենթարկվում են պետական ինքնուրույնության ընդլայնման, իսկ հետո եւ անկախության նպատակներին (սեցեսիա): Նման ազգայնականությունն ամենամեծ տարածումը ստացավ մերձբալթյան հանրապետություններում, որտեղ ազգայնականներն օգտագործեցին փաստարկների ողջ «փունջը». Ոիթենտրոպ–Մոլոտով պակտի քննադատությունը, բնական պաշարների օգտագործման նկատմամբ Վերահսկողության պահանջը, ինքնատնտեսավարման կոնցեպտը:

Մյուսը Ուուսաստանի Դաշնության հանրապետությունների վերնախավերի գաղափարախոսությունն ու քաղաքականությունն էր: Թաթարստանում, Բաշկիրիայում, Յակուտիայում, Տուվայում եւ մյուս հանրապետություններում (բացառությամբ Չեչնիայի) իշխող վերնախավերը Ուուսաստանից լիակատար անկախության հարց չորեցին: Խոսք գնաց սոսկ «տարանջատված ինքնիշխանության» մասին, երբ իրավունքների մի մասը փոխանցվում է դաշնային կենտրոնին: Որոշ դեպքերում հայտ արվեց ֆինանսական, տնտեսական, մշակութային եւ քաղաքական ոլորտներում լայն իրավունքների, մյուսներում՝ հիմնականում բնական պաշարների եւ մշակույթի տնօրինման իրավունքի վրա: Իրավունքների ընդլայնման ամենաարտահայտիչ ձեւով պահանջները եղան Թաթարստանում՝ 1990–1994թթ.: Այսպիսինը կարելի է կոչել պարհտետային ազգայնականություն:

Գաղափարախոսության եւ քաղաքական պրակտիկայի կենտրոնում շրջանառվում էր հենց իրավունքների տարանցատումը՝ դրանց մի մասը դաշնային կենտրոնին ազատ փոխանցման սկզբունքով։ Որպես հետեւանք, ենթադրվում էր այնպիսի քաղաքականության իրականացում, որի դեպքում չփակող էրնիկ խմբերն (Թաթարստանում, օրինակ, թաթարներն ու ռուսները) օգտվեն հավասար իրավունքներից, ինչն արտահայտվեց երկու պետական լեզուների օրենսդրական ճանաչմամբ, որը համընկնում էր հանրապետությունների քաղաքական դեկավարության քննարկումներին եւ գերիշխում էր սոցիալական պրակտիկայում։ Այնպիսի հանրապետություններում, ինչպիսիք են Բաշկիրիան ու Յակուտիան, գաղափարախոսական եւ քաղաքական ձգտումների կիզակետն ուղղվեց տնտեսական ու մշակութային ոլորտներին, սակայն առաջնայնությունը տրվեց այն գաղափարներին, որոնք համապատասխանում էին տնտեսական ազգայնականությանը։

Կարելիայում եւ Կոմիում, որտեղ տիտղոսակիր ազգությունները ժողովրդագրական տեսանկյունից փոքրամասնություն էին կազմում, հիմնականում խոսքը մշակութային ինքնության, լեզվի պահպաննան մասին էր, ինչը համապատասխանում է մշակութային ազգայնականության գաղափարներին։

Մյուս հանրապետություններում, մասնավորապես, Յյուս. Օսիայում եւ Ինգուշիայում, գերիշխում էին պաշտպանության գաղափարները։ տարածքի պաշտպանություն, նրա վրա ազդեցություն, կորցրած հողերի վերադարձ։ Պովոլժիեի գերմանացիները, օրինակ, փորձեցին վերականգնել իրենց ինքնավարությունը, իսկ ինգուշները՝ հասնել ինգուշիայի ու Յյուս. Օսիայի վարչական սահմանի տեղափոխմանը եւ Մերձքաղաքային շրջանն իրենց հանրապետության կազմում փոխանցմանը։

Պաշտպանական ազգայնականության գաղափարներն առկա էին նաև ռուս ազգայնականության գաղափարախոսների շրջանում (Բայկալի էկոլոգիայի պաշտպանությունը, ռուսական գյուղի պաշտպանությունը «դերեւենշչիկ» գրողների կողմից, գյուղացիության պաշտպանությունը, որն, ի դեմս կուլակաթափ

արված եւ աքսորված աշխատավորների, կորցրել էր իր առավել ակտիվ հատվածը):

Հետխորհրդային տարածքում *արդիականացած ազգայնականության* գաղափարների կենսագործման փորձեր արվեցին: 1980-ականների վերջին եւ 1990-ականների սկզբին, երբ Տալլիմից մինչեւ Վիլնյուս շարվել էր «Բալթյան շղթան», մոլդովացիները հիշեցին իրենց ազգակցությունը ռումինացիների հետ, Յայաստանը սկսեց պատերազմել Լեռնային Ղարաբաղի հանար, իսկ Ռուսաստանի կենտրոնում երիտասարդ բարեփոխչինները դառնությամբ խոսում էին, թե ռուսական տարածաշրջաններից որքան միջոցներ են գնում ծայրամասեր: Ենթադրություններ էին արվում, որ եթե Ռուսաստանի ժողովրդավարացման ու արդիականացման նախագիծը հաջողվի, ապա «փախչող» հանրապետություններն իրենք կցանկանան մտնել Ռուսաստանի Դաշնության կազմի մեջ:

Արդիականացումը՝ որպես ինքնուրույնության օգտին գործող փաստարկ, առաջարկել են նաեւ տարածաշրջանային առաջնորդները. օրինակ, որ հողի մասնավոր սեփականության, բաց ներդրումների գաղափարները չի կարելի իրականացնել նախկին վարչակարգի վերականգնման ճանապարհով: Սովորաբար, արդիականացած ազգայնականությունը ծագում է բազմաթիվ պետությունների առավել զարգացած տարածքներում (օրինակ՝ Թաթարստանը Ռուսաստանի քիչ զարգացած տարածաշրջանների համեմատ, Կատալոնիան Իսպանիայի այլ մարզերի համեմատ եւ այլն):

### **Ազգայնականությունը եւ պետությունը**

Ազգայնականությունը պետության հետ կապից դուրս անհնարին է ընկալել: Ազգայնականությունը միշտ պետության նկատմամբ վերահսկողությունը գաղափարապես օրինականացնելու փորձ է: Միեւնույն ժամանակ, դա նաեւ հակազդումն է պետության չափից դուրս միջանտությանը, որը գգում են նրա կազմի մեջ մտնող փոքրամասնությունները:

Միանգամայն բնական է, երբ բազմազգ պետությունում դաշնային կենտրոնը բնակչության հոմոգենացման ուղղությամբ

ջանքեր է գործադրում՝ հույս ունենալով խուսափել ազգայնականություններն անջատողական շարժումների վերած-վելուց: Սակայն, չնայած բոլոր բարի մտադրություններին, ընդհանրության զգացման ձեւավորումը հաճախ վերածվում է (լավագույն դեպքում) վարչարարական մեքենայի գործառույթի՝ արմատավորելով ունիֆիկացումը եւ ուժացումը: Եվ սուկ այդ պատճառով նման փորձերը կարող են մերժվել կամ, առնվազն, քաղաքացիների կողմից քննադատաբար ընդունվել: Ընդ որում, դիմադրում են ոչ միայն փոքրամասնությունները: Ունիֆիկացման միտումը չի կարող հաճելի լինել նաեւ էթնիկ մեծամասնության բնակության տարածքների բնակիչներին:

Բազմիցս Յյուսիս-արեւմուտքի տարբեր տարածաշրջաններում, Ուրալում, Յարավային դաշնային օկրուգում վիճակվում է լսել. «Կենտրոնը մեզ չի զգում», «Կենտրոնը հաշվի չի նստում մեր շահերի հետ, եւ դա խոչընդոտում է երկրում միասնության հաստատմանը»: Այլ էթնիկ խմբերով բնակեցված տարածաշրջաններում նման տրամադրություններն էթնիկ երանգ են ստանում:

Այդպես լինում է եւ մյուս, այդ թվում՝ նաեւ վաղեմի եւ ամուր ժողովրդավարական ավանդությներ ունեցող երկրներում: Բելգիան, Կանադան, Շվեյցարիան չեն խուսափել էթնիկ ազգայնականության միտումներից: Ինչպես ցույց է տվել իր աշխատանքներում Զոն Բրեյլին, ազգայնականությունը կարող է լինել հենց պետական ազգաշինության արդյունք: Նմանատիպ փորձարկումների ձախողված դեպքերը հակառակ արդյունք են տալիս՝ էթնիկ ազգայնականության էլ ավելի վառ արտահայտված ցայտումներ:

Դամիել Կոնվերսին ճշտում է. «Չափից ավելի «ջերմեռանդ» կենտրոնամետության ավելցուկը հաճախ է առաջացրել հոմեոստատիկ ռեակցիա, որն իր հերթին ծայրամասում ծնել է հզոր ազգայնական շարժում»: Ազգայնականության վերելքի (որն ուղեկցում է հասարակության էթնիկական հոմոգենացման ուղղությամբ պետության ջանքերին) մասին է գրում նաեւ Թեդ Գուրը: Յենց պատասխան էթնիկ մորթիլիզացիան նպաստեց Խապանիայում բասկյան ու կատալոնական ազգայնականության վերելքին՝ էթնիկ խմբի

մշակութային ցուցիչներին տալով քաղաքական երանգ: Նմանապես, 1990-ական թվականների սկզբին ռուս եւ ուկրաինացի փոքրանասնության կողմից ցավոտ ընդունվեց մոլովական պետության խտրական քաղաքականությունը համապատասխան լեզուների օգտագործման նկատմամբ: Գրեթե նույն իրավիճակն էր ստեղծվել Յարավային Օսիայում եւ Արխագիայում՝ կապված Վրաստանի 1980-ականների վերջի եւ 1990-ականների սկզբի քաղաքականության հետ: Թարար մտավորականության մի մասի բողոքը ծնեց ՈԴ Պետական դումայի որոշումը՝ թաթարական գիրը կիրիլիցայից լատինականի փոխումն արգելելու մասին:

Յետխորհրդային տարածքի ազգային շարժումների մեջ մասուն լեզուների կարգավիճակի շուրջ քաղաքական վեճերն, անշուշտ, նորիլիզացնող դեր խաղացին: Արդի հասարակությունում լեզուն, նրա կարգավիճակը դառնում են սոցիալական ռեսուրս, ուստի էթնոազգայնականության գաղափարախոսները նրան ոչ պակաս կարեւորություն են տալիս, քան այլ ռեսուրսների (քնական կամ քաղաքական) համար պայքարին: Ընդհանուր առմամբ, այս կամ այն ռեսուրսի շուրջ կոնֆլիկտում գաղափարախոսների կողմից անցկացվում են էթնիկ սահմաններ, որոնց մարկյորներն ամենից հաճախ մշակութային են:

Նման տիպի սահմանազատումների համար առիթ կարող են ծառայել նաեւ այլ շահեր: Օրինակ՝ ՈԴ հանրապետություններում ապրող ռուսների համար բաժանարար եղավ տարածաշրջանային կառավարմանը մասնակցության հնարավորությունը: Յենց սա էլ վերածվեց սոցիալական տեսակավորման եւ համադրման, իսկ որոշ դեպքերում նաեւ էթնիկ խնբերի հակադրման մեխանիզմի:

Յոգեբանները գտնում են, որ որքան փոքր են խտրությունները շփող էթնիկ խնբերի միջեւ, այնքան ավելի մեծ ուժով են դրսեւորվում գոյություն ունեցող տարբերություններով պայմանավորված պահանջները: Յավանաբար, այդ իսկ պատճառով, ինդուստրացումը, ուրբանիզացիան եւ գլոբալացումը, ջնջելով էթնիկ սահմանները, չհանգեցրին դրանց անհետացման, որը կանխատեսվում էր ինչպես Մաքս Վեբերի ու Կառլ Մարքսի

ժամանակներում, այնպես էլ գլոբալացման ժամանակակից տեսաբանների կողմից:

### **Ազատականության եւ ազգայնականության համատեղելիությունը**

Այն հարցին, թե կարող են, արդյոք, մի պետության տանիքի տակ խաղաղ գոյակցել միանգամից մի քանի ազգայնականություն, թերեւս տրվի դրական պատասխան: Ինընին այն փաստի ընդունումը, որ ազգայնականությունը լինում է տարբեր, ենթադրում է, որ նրա որեւէ տեսակը, ձեւը որոշակի պայմաններում մեծ կամ փոքր չափով զուգորդվում է ազատականության ու ժողովրդավարության հետ:

Ազատական արժեքների հետ ազգայնականության համատեղելիության խնդիրը լայն ճանաչում ստացավ շնորհիվ Մայքլ Լինդի «Ի պաշտպանություն ազատական ազգայնականության» հոդվածի (Foreign Affairs, թիվ 3, 1994): Լինդը պնդում է, որ ազգայնականության հանդեպ անվստահությունը, անգամ նրա ազատական, ժողովրդավարական եւ սահմանադրական ձեւով, կոպիտ սխալ է: Նման անվստահությունը ենթադրում է ցանկացած՝ այդ թվում նաև բռնատիրական, բազմազգ պետության կուրորեն սատարում: Ազգայնականության՝ որպես հին անցյալի, դարն ապրած երեւույթի մասին պատկերացումը նախապաշարմունք է, որը չի համապատասխանում քաղաքական պրակտիկային: Անջատողականության ոչ բոլոր դեպքերն են վատ, իսկ ցանկացած գնով բազմազգ պետությունների ամբողջականության պաշտպանման քաղաքականությունը՝ ոչ միշտ լավ:

Արդարացի է եւ այն, որ մի (երբեմն նաև մի քանի) ազգի անջատումը չի նշանակում, թե յուրաքանչյուր բազմազգ պետություն պատրաստ է քանդվել, ինչպես թղթե տնակը: Իսկ պետության բազմազգ լինելը բնավ էլ չի հանդիսանում անհաղթահարելի արգելք նրա ժողովրդավարացման համար: Սուկ կարեւոր է նշակել իշխանության բաշխման նեխանիզմ էթնիկ խնբերի միջեւ: Որպես հաջողված օրինակներ, Լինդը նեցբերում է Բելգիան, Կանադան, Շվեյցարիան: Նրա տեսանկյունից, չարժե

վախենալ նաեւ Խորհրդային Միության կամ ժամանակակից Ռուսաստանի տիպի գերհզոր բազմազգ պետություններից, եթե, իհարկե, նրանք ստեղծվում են կամավորության սկզբունքով։ Ստացվում է, որ ազգայնականությունը լիովին համատեղելի է ազատական արժեքների հետ՝ երկու կարեւորագույն պայմանների պահպանման դեպքում։ մարդու կողմից սեփական ազգության ազատ ընտրության հնարավորություն եւ մշակութային փորձամասնությունների իրավունքների խաղաղ ապահովում։

Ազատական արժեքների հետ ազգայնականության համատեղելիության հանդեպ հետաքրքրությունը, որը դեռ համենատարար վերջերս գաղափարախոսական անհեթերություն էր թվում, աչքի առաջ աճում է։ Եվ դա պատահական չէ։ Եթնիկ գտումներ, ագրեսիվ անջատողականություն, ինքնորոշման հոչակում։ այս բոլոր խնդիրներն Արեւմուտքը ստիպված է լինելու լուծել ոչ թե ծովերից անդին, այլ սեփական կամ հարեւան պետություններում։ Ռուսաստանը եւս ստիպված է ազգայնականության արտաքին եւ ներքին մարտահրավերներին պատասխան փնտրել, որոնք աչքի առաջ դառնում են էլ ավելի հզոր ու բազմաբնույթ։ Խնդիրն այստեղ ոչ միայն Կոսովոյի կամ Արխագիայի կարգավիճակի հարցում երկրի դեկավորության դիրքորոշումն է, այլեւ այն իրավիճակը, որը ստեղծվել է բուն ռուսական տարածաշրջաններում, ինչպես նաեւ այն, թե տարբեր եթնիկ խնդերի ներկայացուցիչները որքանով են ընդունակ գիտակցելու իրենց ընդհանությունը եւ սեփական շահերի ոչ բռնի կենսագործնան անհրաժեշտությունը։

«Россия в глобальной политике»

№ 6, 2008

«Հանրապետական», 2009, թ. 1

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>Ֆեղոդոր Շելով-Կովեռյան</b>	
ԳԼՈԲԱԼ ճԳՍԱԺԱՄԻ ԷՌԻԹՅԱՆ ՍԱՍԻՆ .....3	
ճԳՍԱԺԱՄԻ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....11	
<b>Մթիվեն Քոհեն</b>	
«ԱՇԽԱՐՅԸ ԴԱՐՁԵԼ Է ԱՌԱՎԵԼ ՎՏԱՆԳԱՎՈՐ».....19	
<b>Ապոլոն Դավիդսոն</b>	
ԵՎՐՈՊԱՅԻ ՄՇՈՒՇՈՏ ԱՊԱԳԱՆ .....29	
<b>Ջենրի Քիսինչեր</b>	
ՄԻԶՈՒԿԱՅԻՆ ՄՊՁԱՎԱՆԶ .....37	
<b>Մերգեյ Կարագանով</b>	
ԱՆԱՎԱՐՏ «ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄ».....43	
<b>Ոորերտ Կեյզան</b>	
ԵՍԱԿԵՆՏՐՈՆ ԱՇԽԱՐՅ .....53	
<b>Զբիգնեւ Բժեզինսկի</b>	
ԱՆՑԵՏԱԶԳԵԼԻ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐ .....60	
<b>Լեոկալիա Դրոքիմեւա</b>	
ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԱԶԳԱՅԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ .....70	